

ՉԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռուբեն Խուրշուդյան

Չայրենասիրությունը խոր եւ բազմաշերտ զգացում է, որը տրված է մարդուն բնությունից եւ ի սկզբանե ծրագրավորված է նրա գեներում:

Իբրեւ առաջնային բնագոյ (առաջնային եւն համարվում այն բնագոյները, որոնք անմիջականորեն սպասարկում են տեսակի կենսապահովումը)՝ այն կապված է տարածքային ռեֆլեքսին կամ, ինչպես դա ընդունված է անվանել արդի գիտությունում՝ տարածքային հրամայականին, ըստ որի՝

1. Մարդը տարածքային էակ է: Բնականոն գոյատեւման համար մարդը պիտի ունենա որոշակի կենսատարածք, որը նրա կայուն եւ բարգավաճ կյանքի հիմք է հանդիսանում: Ապատարածքայնությունը անբնական վիճակ է մարդու համար՝ հղի ամենաաղետալի հոգեֆիզիկական խեղումներով, ընդհուպ մինչեւ կործանումը:

2. Ինչպես կենդանիները յուրացնում եւ նշագծում են որոշակի տարածք, այդպես էլ մարդը իր տիրույթի սահմանները գծում է ու պարսպում: Ինչպես կենդանիները միասին պահպանում են իրենց համատեղ տարածքը օտարներից, այդպես էլ մարդիկ պաշտպանում են սեփական երկիրը թշնամուց: Մարդու պահանջմունքը՝ ունենալ սեփական տարածք եւ պահպանել այն բոլոր հնարավոր միջոցներով, ժառանգական հրամայական է:

Տարածքային սկզբունքի բացարձակ գերակայությունն ապացուցում է այն անհերքելի փաստը, որ մարդկանց քանակը, որոնք իրենց կյանքը տվել են սեփական տարածքների համար, անհամեմատ մեծ է այն մարդկանց թվից, ովքեր զոհվել են հանուն կին էակի, այսինքն՝ հանուն բավական զորեղ կենսաբանական վերարտադրման բնագոյի:

Տարածքային հրամայականը հանդիսանում է հզոր ենթագիտակցական ազդակ՝ հայրենիքի նկատմամբ սիրո ծնունդի: Սակայն այդ սերը, ինչպես եւ այն ծնող ուժը, բնագոյային են՝ անգիտակցական: Մարդը չի կարող բացատրել, թե ինչու է սիրում Չայրենիքը, նրա որ հատկանիշներն են առավել հրապուրում իրեն, ինչով է իր տարածքն ավելի լավ, քան ուրիշներինը: Այդ սերը պատճառաբանված չէ, քանզի այսպես կարող է սիրել միայն բնության հետ օրգանական կապ եւ ներդաշնակություն ունեցող էակը, որի համար բնությունը՝ ի դեմս տարածքի, սեփա-

կան ես-ի անքակտելի մասն է: Նման զգացումը հրաշալի նկարագրել է Չանո Սահյանը.

*Չայաստան ասելիս այտերս այրվում են,
Չայաստան ասելիս ծնկներս ծալվում են,
Չգիտեմ ինչո՞ւ է այդպես...
Չայաստան ասելիս աչքերս լցվում են,
Չայաստան ասելիս թեերս բացվում են,
Չգիտեմ ինչո՞ւ է այդպես...*

Սա բնագոյային սիրո դասական արտահայտումն է: Սակայն քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց, բնագոյային սերը լրացվում է բանական սիրով: Մարդը սկսում է պատճառաբանել իր սերը: Չայրենիքը որպես բնություն եւ որպես տարածք այլեւս չի կարող բավարարել նրա սերը. սիրո գաղափարն ընդլայնվում է մշակույթի, պատմական հիշողության եւ արժեքային համակարգի հաշվին ու ձեռք է բերում հոգեւոր բնույթ: Այս փուլում առաջանում է հոգեւոր հայրենիքի գաղափարը, որը հարուստ է սիրո համար հրապուրիչ հատկանիշներով: Մարդը գիտակցում է, թե ինչու է սիրում Չայրենիքը եւ հանուն ինչի կարող է զոհաբերել սեփական կյանքը: Սիրո այս վիճակը իրեն հատուկ դիպուկությամբ նկարագրել է Պարույր Սեւակը.

*...Որ մե՛նք, միայն մե՛նք Արարատ ունենք,
Եվ որ այստեղ է՝ բարձրիկ Սեւանում,
Երկինքը իր ճիշտ պատճենը հանում:
Պարզապես Դավիթն այստեղ է կռվել:
Պարզապես Նարեկն այստեղ է գրվել...*

Չեւոզա դարաշրջանը բանական սերը լրացրեց քննական սիրով: Մարդը սկսեց նկատել իր սիրո առարկայի թերի կողմերը եւ թույլ տվեց իրեն բարձրաձայն արտահայտվել այդ կապակցությամբ: Ազգային հպարտության կողքին հայտնվեց ազգային ցավը՝ այդ թերիների առումով, ցուցահանվեց դրանցից ազատվելու վճռականություն: Այս փուլում սերը Չայրենիքի նկատմամբ ձեռք է բերում բարձր շիկացում: Սիրո նման վիճակը ճշմարտորեն նկարագրում է Սիլվա Կապուտիկյանը.

*...Մենք քեզ սիրեցինք
Ո՛չ ազգականի հանդարտիկ սիրով,
Այլ՝ սիրածի՛ պես, սիրահարի պես...
Մերթ խռովելով, մերթ հաշտվելով...*

*Քեզ կորցնելու ահից տագնապած,
Քեզ ունենալու խինդից՝ երջանիկ,
Եվ բախտիդ համար անվերջ, ամեն պահ մեռնել-ապրելով...*

* * *

1915-ը կրկին հաստատեց այն ճշմարտությունը, որ Հայրենիքի էությունը հոգեւոր է, որ Հայրենիքի իրական տեղանքը՝ ոգին է: Ինչպես ասում է Հայկ Ասատրյանը՝ *դա մի բան է ոգուց եւ ոգու համար*: Կարելի է խլել Հայրենիքի մարմինը, բայց ոչնչացնել ազգի ոգին, որը Արարիչը դրել է Հայրենիքի մեջ, անհնարին է, քանզի ոգին հավիտենական է:

Այս գաղափարը գունեղ արտահայտչությամբ ձեւակերպել է Գարեգին Նժդեհը. *«Իմ երկիրը ժամանակավորապես մնալով օտար լծի տակ, չի կարող դառնալ այդ օտարի հայրենիքը, քանզի թրքությունը ոչինչ ունի տված այդ երկրին – ո՛չ մեծ մեռելներ, ո՛չ միտք, ո՛չ զգացում... այն ամենը, որ աննյութեղեն հայրենիքը կստեղծե»*: Ապա նաեւ՝ *«Մի ժողովրդի հայրենի հողը չի կարող ուրիշի մնայուն հայրենիքը դառնալ... Բռնագրաված երկրամասերը միշտ էլ, վաղ թե ուշ, անցնում են իրենց պատմական տերերի ձեռքը՝ պայմանով, որ այդ վերջինի մեջ ժամանակը տկարացրած չլինի սերը, կարոտն ու պաշտամունքը դեպ հայրենի երկիրը»*:

Հայրենիքը կենդանի է ոգով եւ միայն ոգով: Այն մի Մեծ գաղափար է, որն ապահովում է ոգու միություն, որով՝ զերծ պահում ազգը քաղաքական եւ դավաճանական պառակտումներից: Այդ դեպքում՝ Ցեղը գոյության իմաստ է, Հայրենիքը՝ ճակատագիր:

Ռուս վտարանդի մտածող Իվան Իլյինը, խորհելով իր ժողովրդի ճակատագրում Մեծ գաղափարի դերի մասին, անում է մի շատ հատկանշական եզրահանգում: *«Մեծատիրությունը,- նշում է նա,- պայմանավորվում է ոչ թե տարածքի չափով եւ բնակչության թվով, այլ ժողովրդի եւ նրա կառավարության ունակությամբ՝ վերցնել իր վրա մեծ միջազգային խնդիրների ստեղծագործական լուծման գործը»*:

Արդարեւ, եթե որեւէ ժողովրդի մոտ բացակայում է Մեծ գաղափարը, որով՝ մեծատիրական ոգին եւ ուժն ու կամքը՝ լուծել մեծ խնդիրներ, նա պատմականորեն անհեռանկարային է: Այն ազգը, որը հաղորդակից չէ Արարչի կողմից տրված՝ իր գոյությունն իմաստավորող գաղափարին, կորցնում է հետագա գոյատեւման բարոյական իրավունքը: Հետեւաբար, մեզանում միայն Մեծ գաղափարն է ընդունակ հայրենասիրությանը տալ նպատակայնություն, որով եւ վերահաստատել մեր հոգեւոր եւ տարածքային լիարժեքությունը:

Այսպիսով, Մեծ գաղափարը հայ հայրենասիրությանը կտա նոր ուղղվածություն՝ հայացք ապագային: *«Իբրեւ հասկացություն՝ Հայրենիքն ընդգրկում է ոչ միայն անցյալն ու ներկան, այլեւ գալիքը... Ձարգացող մի հավերժություն է Հայրենիքը»*, - ասում է Նժդեհը:

Դարեր շարունակ հայ հայրենասիրությունը սկսել է գործել միայն այն ժամանակ, երբ Չարը կանգնել է Հայրենիքի դռան շեմին: Մեծ գաղափարի զորությամբ կանխարգելել վտանգները՝ կանխատեսելով, ծրագրավորելով հաղթական ապագան. սա՛ է նոր ժամանակների այլընտրանք չունեցող հրամայականը: Սա՛ է այն նոր, Աստծո մտադրությանը եւ կանքին միահյուսված *բնագանգական հայրենասիրությունը*, որով պիտի լրացվեն մեր կողմից ուրվագծված հայրենասիրության ավանդական տարատեսակները:

**ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԴԻՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ
ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ
Դավիթ Յովհաննիսյան**

Յուրաքանչյուր պատմական դարաշրջանին բնորոշ քաղաքակրթական համակարգի շրջանակներում գործող հասարակության գոյակերպը դրսևորվում է այդ հասարակության համար սկզբունքային նորմերը գրանցող եւ տարածող միջերի միջոցով: Ժամանակակից *ինֆորմացիոն քաղաքակրթության* առավել հատուկ է դիցաբանական համակարգի՝ հասարակության մտածելակերպը եւ ապրելակերպը որոշակիորեն պայմանավորող նորմերի եւ միջերի միջոցով արտահայտված տարրերի տիրաժավորումը հիմնականում *զանգվածային մշակույթի* միջոցով*:

Բոլոր դիցաբանական համակարգերի գլխավոր խնդիրն է՝ ձեւակերպել Նոր աշխարհի արարման իր միջոցները, որի հիման վրա արդեն տրվում են կարեւորագույն չափիչները՝ տարածության եւ ժամանակի կատեգորիաներն արտահայտող միջոցները:

Նոր աշխարհի արարման միջոցները կարող է դրսևորվել երկու ձեւով. առաջինը կապված է Տիեզերքի ստեղծմանն ուղղված Արարչի ակտի նկարագրման հետ, իսկ երկրորդը՝ Հին աշխարհը կործանելու եւ փոխարենը նորը ստեղծելու՝ ավելի Դեմիուրգին (*հունական դիցաբանությունում՝ վարպետ-արարիչ, որը ստեղծում է աշխարհակառույցի տարրեր, բառացի՝ ժողովրդի համար արարող- խմբ.*) բնորոշ գործողության հետ:

Ժամանակակից դիցաքաղաքականության մեջ այդպիսի միջոցները դարձավ սառը պատերազմի ավարտը, որը նշանաբանեց Հին աշխարհի կործանումը եւ զանգվածային գիտակցության կողմից ընկալվեց որպես մի դարաշրջանի ավարտ եւ մյուսի դեռեւս չձեւակերպված սկիզբ, այսինքն՝ ժամանակի առումով Ջրո:

Բայց մինչ այդ պետք է հիմն ավարտվի, եւ այդ ավարտի մասին լուրը հնչեցնում են Ֆրենսիս Ֆուկույամայի ստեղծագործությունների անվանումները՝ «Պատմության ավարտը եւ Վերջին մարդը», «Մեծ խզում» եւ այլն:

Նոր դարաշրջան սկսելու համար անհրաժեշտ է բոլորովին նոր որակի իրադարձություն, որի տեքստային (նշանաբանական) դրսևորումը դառնում է Նոր հայտնություն, նոր ժամանակների Սուրբ գիրք, ինչպես դա տեղի ունեցավ, օրինակ, Հիսուս Քրիստոսի խաչ բարձրա-

նալու եւ հարություն առնելու հետ, որոնց մասին պատմող ավետարանները քրիստոնեության սուրբ տեքստերը դարձան:

Դատելով այս տրամաբանությամբ՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ այդպիսի իրադարձություն-հայտնություն էր սեպտեմբերի 11-ը, որից հետո մեկը մյուսի հետեւից սկսեցին ստեղծվել տեքստեր, որոնց էական իմաստն էր հայտնել, որ սկիզբ է առնում նոր իրողություն եւ այդ իրողությունը հերթական Չարի, այսինքն՝ համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարն է: Պատահական չէ, որ իրադարձությանը հետեւած հենց առաջին օրերին հնչեցին խաչակրաց արշավանքի մասին Բուշ-կրտսերի բառերը: Տիտանին փոխարինեց սատանան, «չարիքի կայսրությանը»՝ «Ալ-Կաիդայի» մութ անհայտությունը մարմնավորող տիպիկ դիցաբանական հերոս (հակահերոս) մարմնավորող Ուսամա բեն Լադենը:

Այս նոր հայտնությունից հետո ժամանակը դարձյալ ձեռք է բերում իր բնականոն գծային տեսքը, որը, սակայն, յուրաքանչյուր անգամ քառու ներկայացնող ուժերի հետ բախվելիս, նորից ստանում է մշտական դիսկրետ շրջադարձության բնույթ: Գծային ժամանակում արդեն անհնար է անվանել ստեղծագործությունը «Արդյո՞ք Միացյալ Նահանգներին անհրաժեշտ է արտաքին քաղաքականություն», ինչպես դա արել էր Յենի Բիսինջերը: Գծային ժամանակի տրամաբանության մեջ այն ամենը, ինչը կապված է վերջնական նպատակի՝ չարը պատժելու հետ, պարզ է եւ անվիճելի:

Տարածության կատեգորիան նույնպես պետք է համապատասխանեցվի նոր դիցաբանականությանը, ուստի ծնվում է Մեծ շախմատային տախտակը: Էական է միայն այն, ինչն ընկալելի է մեզ տվյալ ժամանակաշրջանում մեջ եւ ինչը հասկանալի է մեր հիմնական միջի, այսինքն՝ *չարի եւ բարու պայքարի* կամ, ժամանակակից լեզվով ասած՝ կոնֆլիկտի հարթության մեջ: Շատ նման է դիցաբանացված աշխարհի բոլոր պատկերաբարտեզներին, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր աշխարհի կենտրոնը, օրինակ՝ Երուսաղեմը, Ողիմպոսը, Յոննը, Մեքքան եւ այլն, մի քանի տարածք/պետություններ, որոնք կամ հայտնի էին, կամ կարելու տվյալ կենտրոնի համար, իսկ մնացածը դուրս էր քարտեզից, այսինքն՝ տվյալ ժամանակաշրջանի հասարակության գիտակցությունից:

Այն, որ տիեզերքի կենտրոնը գտնվում է Նյու Յորքում, բոլորովին չի հակասում Եվրասիան շախմատային տախտակի հիմնական թատերաբեմ դիտարկելուն: Պարզ է նաեւ Դեմիուրգը, որը ստեղծել է խաղի կանոնները եւ հիմնականում նաեւ խաղացողների դերերը՝ իրենց ամրագրված, բայց դեռեւս ոչ հստակ սահմաններով, որոնց մեջ միայն կարող է ընթանալ խաղը՝ միայն այդ նշված խաղի կանոնների պահպանմամբ:

Սակայն Նոր հայտնությունը դեռ չկա, ուստի խաղացողների ամպլուաների պարզաբանումը հստակ չէ, նրանց թիվը եւ անունները չեն ձեւակերպվել, քանի որ դիցաբանական համակարգը դեռեւս ձեւավորման շրջանում է գտնվում: Բացի այդ, Ջ.Բժեզինսկին դեռեւս երկբեւեռ աշխարհի կապանքների մեջ է եւ աշխարհը նկարագրում է շախմատային տախտակի երկգույնության՝ սեւի ու սպիտակի մեջ, ինչն արդեն թույլ չի տալիս ամբողջական համահունչ պատկեր ձեւավորել:

Արդեն Սամուել Չանտինգտոնի «Քաղաքակրթությունների բախում» ստեղծագործության անվանումից հայտնի են դառնում նոր աշխարհի իրական դերակատարները՝ *քաղաքակրթությունները*: Դրանք, հեղինակի սահմանմամբ, արտահայտում են իր ձգտումը՝ ներկայացնել ժամանակակից աշխարհի զարգացման ընդհանուր պարադիգմը եւ թվով յոթն են կամ ութը: Քաղաքակրթությունները տարբեր են եւ հաճախ հակազդող, իրար հետ բախվող: Այս իրողությունն օբյեկտիվ բնույթ ունի, ուստի պայքարն անխուսափելի է: Նման է հին նախամոնոթեիստական աստվածների պահվածքին, որոնք կռվում էին իրար դեմ՝ խաղալով մարդկանց հետ, օգնելով իրենց հետ կապված կամ ուղղակի համակրելի հերոսներին եւ թագավորներին ու խանգարելով նրանց թշնամիներին: Ճակատագիր է, որը պետք է ընդունվի որպես այդպիսին՝ քաղաքակրթությունները տարբեր են, եւ այս փաստի հետ ոչինչ հնարավոր չէ անել: Բայց Ս.Չանտինգտոնը տեսնում է բախումներից խուսափելու հնարավորությունը. կան ունիվերսալ արժեքներ, որոնք պետք է ընդունվեն բոլոր քաղաքակրթությունների կողմից: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի վերջ դնել պատերազմներին, ահաբեկչությանը եւ մեղմել կոնֆլիկտը:

Ս.Չանտինգտոնը, փաստորեն, իր առանձնացրած քաղաքակրթություններից մեկին վերապահում է Դեմիուրգի դեր, քանի որ այդ քաղաքակրթության արժեքային համակարգի վրա է կառուցվում նոր Տիեզերքը եւ մինչեւ չկառուցվի՝ պատերազմները, բախումները, կոնֆլիկտները, մի խոսքով՝ այն ամենը, ինչից կազմվում է պայքարը, անխուսափելի են:

Քաղաքակրթությունների բախման, պայքարի էներգիան որպես զարգացման ներուժ օգտագործելու հիմնարար արժեքի վրա են հիմնվում նաեւ մի շարք ժամանակակից ռուս մտածողներ: Օրինակ, Ս.Պերեսլեզինը սկզբունքորեն ընդունում է քաղաքակրթությունների բախման դիցաբանական տեքստը, սակայն իր քարտեզն ուրիշ տեսք ունի. այնտեղ որպես գործող դիցաբանական հերոսներ առանձնացվում են կայսրությունները, որոնց անուններն են Ավստրալագիա, Եվրամերիկա, երեք «ենթակայսրություններից» բաղկացած՝ Եվրասիա եւ այլն: Ս.Պերեսլեզինը ստեղծում է իր աշխարհի պատկերը՝ իրականում չհակադրվելով Ս.Չանտինգտոնի դիցաբանությանը, այլ միայն իր տեսակետից ճշտելով

այդ դիցաբանության ընկալման (եւ ոչ թե կառուցման) սկզբունքները:

Փոքր-ինչ այլ է Կոնդրատելի եւ Նեկլեսայի մոտեցումը: Վերջիններիս կարծիքով, քաղաքակրթությունների բախման հիմքում ընկած են ապրելակերպի իդեալական մոդելի նկատմամբ գոյություն ունեցող՝ իրարից սկզբունքորեն տարբերվող մոտեցումները, որոնցից բխում են տարբերությունները տնտեսության կազմակերպման մեջ: Ուստի, բախվում են քաղաքակրթությունները, որոնք առանձնացվում են ոչ թե էթնոկոնֆեսիոնալ սկզբունքով, ինչպես դա անում է Ս.Յանտինգտոնը, այլ տնտեսական հզորության չափանիշով, ինչն էլ դրսեւորվում է Կայսրություն-Տնտեսություն տեսքով:

Նոր աշխարհի տրամաբանության սկզբունքները փորձում են բացահայտել նաեւ Ռուսաստանում հայտնի փիլիսոփա-մեթոդաբաններ Պ.Շչեդրովիցկին եւ Ե.Օստրովսկին: Նրանք պնդում են, որ ներկայումս պետք է հրաժարվել Յին աշխարհին բնորոշ ձեւակերպումից, որը մատնանշում էր երկու կարեւորագույն արժեք, որոնցից բխում էր որոնց հիման վրա հազարամյակներ շարունակ կառուցվում էր ակտուալ քաղաքականությունը՝ «արյուն եւ հող», եւ փոխարենը ընդունել հիմնարար արժեքների նոր գույգ՝ «լեզու եւ մշակույթ»: Յեղիմակների կարծիքով, «աշխարհների սահմաններն անցնում են լեզուների եւ դրանց համապատասխանող ապրելակերպերի տարածման գոտիների եզրերով»: Այս նոր միջն անհրաժեշտ է ներկայիս ռուսական աշխարհայեցողությանը, քանի որ կայսրության փլուզումից եւ «հողի եւ արյան» զգալի կորուստներ կրելուց հետո, ռուսական դիցաքաղաքական մտածողությունը, պատրաստ չլինելով համակերպվել այդ կորուստների օբյեկտիվ իրականության հետ, կայսրության գոյության նոր սկզբունք պետք է առաջարկի. պետք է պահպանել եւ պաշտպանել բոլոր այն տարածքները, որտեղ դեռ գործում է ռուսաց լեզուն եւ էական է ռուսական մշակույթը: Յետեւաբար, կան որոշակի սահմաններ, որոնք այլ սահմանների հետ հատման կետում բախման մեջ են մտնում: Այդ սահմաններից ներս ռուսական մշակութային կայսրությունն է, դրանցից դուրս՝ այդ սահմանների վրա հարձակումների պատրաստ այլ մշակութային կայսրությունները (ֆրանսախոս, անգլախոս, չինախոս եւ այլն):

Այսպիսով, դիտարկված օրինակների հիման վրա՝ ժամանակակից դիցաբանական պատկերների հիմնական միտման վերլուծությունը բացահայտում է վերջիններիս կոնֆլիկտի միֆոլոգիա լինելը: Այսինքն՝ Նոր աշխարհի բոլոր առաջարկվող միֆոլոգիաները զարգացման էներգիա են, որ ապահովում են շարժումը, իրադարձությունների՝ տվյալ դիցաբանությունից բխող սկզբունքների հիման վրա մեկը մյուսին հետեւելը եւ մեկը մյուսով պայմանավորվելը:

Մեր տեսակետից, յուրաքանչյուր պատմական դարաշրջանին համապատասխանում է միայն մեկ քաղաքակրթություն: Շատ են մշակույթները, մշակութային համակարգերը, որոնցից յուրաքանչյուրն իր ներքին ներուժին համապատասխան լուծում է քաղաքակրթությանն ադապտացվելու խնդիր: Կան մշակույթներ, որոնք այդ խնդիրը լավ են լուծում (օրինակ՝ անգլոսաքսոն բողոքականների, ճապոնացիների, կոմունիստ կոնֆուցիական չինացիների մշակույթները), կան, որ տեղյակ չեն քաղաքակրթության մասին (օրինակ՝ Ամազոնիայի խորքերում ապրող ցեղերի գրեթե անհայտ մշակույթները): Ադապտացման էությունը կտրականապես տարբերվում է բախման էությունից: Այն չի պարունակում պայքարի, պատերազմի, բռնության գաղափարներ: Միաժամանակ այն չի կապում զարգացման խնդիրը էական մշակութային արժեքների խաթարման հետ:

Այս մոտեցումը թույլ է տալիս դիտարկել *կոնֆլիկտների լուծումը որպես ադապտացման խնդիր*, այսինքն՝ ժամանակակից ինֆորմացիոն քաղաքակրթությանը համակերպվելու, համապատասխանելու եւ վերջինիս սկզբունքային օրենքների շնորհիվ՝ զարգանալու, կոնսոլիդացվելու եւ այդ ճանապարհով լուծումներ գտնելու հրամայական:

* Մասս-կուլտուրայում տրվում է կենցաղային գիտակցությանը համապատասխանող եւ հենց այդ գիտակցության ընկալումների մակարդակով պայմանավորված տիեզերքի բազմատեսակ եւ բազմաբնույթ արտահայտությունների համակարգ, որը, կապված լինելով աշխարհի օբյեկտիվ գիտական պատկերի հետ, այնուհանդերձ, սկզբունքորեն տարբերվում է վերջինից:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ Գագիկ Տեր-Չարությունյան

2004թ. ամրապնդվեցին այն միտումները, համաձայն որոնց առաջիկայում աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական գլոբալ շարժերն ընթանալու են ԱՄՆ – մնացյալ աշխարհ մրցակցության նշանի տակ: Նախկինի պես այդ գործընթացներն էապես պայմանավորվելու են ԱՄՆ վարած քաղաքականությամբ, որի ակտիվ ուղղվածությունը ամրագրվեց Ջ.Բուշի վերընտրումով: Նոր վարչակազմում հարձակողական քաղաքական գործիչների դիրքերը զգալիորեն ամրապնդվել են, մինչդեռ չափավոր հայացքներ ունեցող որոշ փորձագետների ծառայություններից հրաժարվել են:

Չարկ է նշել, որ ԱՄՆ-ը վերջին տարիներին ընտրել է *զարգացման մոբիլիզացիոն ուղին*: Դրա վկայություններից են Ջ.Բուշի օրոք ազգային անվտանգության նոր հայեցակարգի համատեքստում ընթացող հատուկ ծառայությունների հզորացումը եւ միավորումը մի ընդհանուր ղեկավարության ներքո: Ջզալիորեն աճել է պաշտպանության նախարարության դերը եւ նշանակությունը. այն, փաստորեն, վերածվել է պետության մեջ պետության, որի գերատեսչական շահերը երբեմն գերակայում են ազգային շահերին: Ջուզահեռ՝ երկրում նկատվում են տնտեսական համակարգային բնույթի դժվարություններ եւ քաղաքացիական իրավունքների նվազման միտում:

Չամաձայն ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի (NIC) կանխատեսումների, առաջիկա 15 տարիներին հնարավոր են գլոբալ զարգացումների մի քանի սցենարներ, որոնք կարող են հանգեցնել.

«Ամերիկյան աշխարհի» - ԱՄՆ-ը ձեւավորում է միաբեւեռ նոր աշխարհակարգ:

«Նոր խալիֆաթի» - իսլամական աշխարհը սկսում է ճնշել արեւմտյան ժողովրդավարական հանրություններին:

«Ահի շրջանի» - ահաբեկիչները ձեռք են բերում զանգվածային ոչնչացման զենք, իսկ մնացյալ աշխարհը սեփական անվտանգությունն ապահովելու համար դիմում է ծայրահեղ միջոցների, որի հետեւանքով ձեւավորվում է տոտալիտար հասարակարգ:

Այսպես կոչված «Դավոսյան աշխարհի» - Չինաստանը եւ Չնդկաստանն իրենց հզորությամբ գերազանցում են ԱՄՆ-ին եւ ԵՄ-ին՝ վերածվելով աշխարհի ռազմաքաղաքական առաջատարների:

Սկստենք, որ առայժմ ԱՄՆ-ը պահպանում է գրեթե բոլոր տարածաշրջաններում ռազմավարական եւ օպերատիվ բնույթի ակտիվ գործողություններ վարելու կարողությունը՝ արդյունավետորեն պայքարելով ԵՄ-ի, Չինաստանի եւ Ռուսաստանի աճող հավակնությունների դեմ:

ԱՄՆ – ԵՄ հարաբերությունները

ԱՄՆ–ԵՄ մրցակցությունն ընթանում է դիվանագիտական, տեղեկատվական եւ տնտեսական պատերազմների հարթություններում: Պետք է շեշտել նաեւ ԱՄՆ–ԵՄ քաղաքակրթական բնույթի խորացող հակասությունները: Մասնավորապես՝ համարվում է, որ ներկայումս ընթանում է հակամարտություն *«պատերազմի մշակույթի» (ԱՄՆ) եւ «խաղաղության մշակույթի» (Եվրոպա)* գաղափարախոսությունների միջեւ: Գաղափարական լարվածությանը լրացուցիչ նպաստում են նաեւ Ջ.Բուշի արմատական հանրապետականներից եւ նեոկոնսերվատորներից կազմված թիմի քաղաքական որոշումների կրոնական-աստվածաբանական հիմնավորումները, ինչն աշխարհիկ հենք ունեցող Եվրոպական քաղաքական կուլտուրայի համար անընդունելի է:

«Ռեալ աշխարհաքաղաքականության» հարթությունում ԵՄ-ը էապես զիջում է ԱՄՆ-ին ռազմական ոլորտում: Այդ հանգամանքը հավասար տնտեսական չափանիշների պարագայում պայմանավորում է ԱՄՆ առավելությունը գլոբալ քաղաքական խնդիրների հարթությունում: ԱՄՆ-ը լրացուցիչ առավելություններ է ձեռք բերում նաեւ ԵՄ ներսում կենտրոնախույս ուժերին աջակցելով: Նման դերի համար օգտագործվում են հատկապես Արեւելյան Եվրոպայի երկրները: Սակայն վերջին ժամանակահատվածում, ԵՄ կառույցների հզորացմանը զուգահեռ, արեւելաեվրոպական երկրներում եւ անգամ Միացյալ Թագավորությունում նկատվում է դեպի Եվրացենտրիզմ վերակողմնորոշվելու միտում:

ԱՄՆ–ԵՄ հակասությունները կրում են օբյեկտիվ բնույթ, ինչը պայմանավորում է նրանց միջեւ ստեղծված լարվածության երկարատեւությունը: Ռազմավարական տեսակետից նման իրավիճակը կարող է փոխվել, եթե Ռուսաստանի ռազմատնտեսական հզորացումը սկսի սպառնալ ԵՄ շահերին: Դա, ինչպես ցույց տվեց Ուկրաինայի օրինակը, հանգեցնում է ԱՄՆ–ԵՄ մերձեցմանը հակառուսական հենքի վրա՝ մոտավորապես այն տրամաբանությամբ, ինչ գոյություն ուներ սառը պատերազմի տարիներին: 2003-2004թթ. այդ տրամաբանությունը մասամբ խաթարված էր իրաքյան պատերազմի նկատմամբ Ռուսաստան–ԵՄ համաձայնեցված դիրքորոշմամբ: Սակայն 2005թ., թերեւս, Ռուսաստանը եւ ԵՄ-ը Իրաքի խնդրում, հաշտվելով ստեղծված իրողության հետ,

գրավելու են ավելի հանդուրժողական դիրքեր: Նրանք փորձելու են առանձին-առանձին առաջ մղել սեփական շահերը, որոնք միշտ չէ, որ համընկնելու են (ԵՄ եւ Ռուսաստանի շահերը, թերեւս, համընկնեն ԱՄՆ–Իրան առճակատման հետ կապված):

Համենայնդեպս, դատելով եվրոպական գործիչների հայտարարություններից եւ քայլերից, մարտավարական առումով 2005թ. սպասվում է ԱՄՆ–ԵՄ հարաբերությունների փափկեցում: Դա հիմնված է ԵՄ-ում ձեւավորված այն քաղաքական գիտակցության վրա, որ ներկայումս պետք է որոշ զիջումներ անել ԱՄՆ-ին՝ սպասելով, որ վերջինս «կոտրվի» տնտեսական դժվարությունների (սա, առաջին հերթին, վերաբերում է ԱՄՆ բյուջեի ահռելի դեֆիցիտի հետ կապված խնդիրներին եւ դոլարի՝ որպես համաշխարհային տարադրամի դիրքերի զիջմանը) կամ գլոբալ հակահարեկչական պատերազմի հետեւանքով:

ԱՄՆ – Ռուսաստան հարաբերությունները եւ ԴԴ-ն

ԱՄՆ – Ռուսաստան հարաբերություններին նախկինում բնորոշ էին հանրության համար հնչեցված արտաքուստ ջերմ շփումները «հակահարեկչական կոալիցիայի» շրջանակներում: Համարվում էր նաեւ, որ Բուշի ու Պուտինի միջեւ ստեղծվել են մտերիմ հարաբերություններ: Իրականում այդ ամենը զուգորդվում էր կոշտ պայքարով, որում գլխավորը ԱՄՆ ձգտումն է ԱՊՀ տարածքում հաստատել իր առաջնայնությունը: ԱՄՆ – Ռուսաստան հակասություններում սկզբունքային նշանակություն ունեն վերջինիս կողմից Իրանին միջուկային տեխնոլոգիաներ տրամադրելը եւ Իրաքի խնդրում մոտեցումների սկզբունքային տարբերությունը:

2005 թվականին, համաձայն Բուշի վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունների, ԱՄՆ-ը էապես կոշտացնելու է Ռուսաստանի նկատմամբ վարվող ռազմավարությունը եւ հրաժարվելու է արտաքուստ ջերմ հարաբերություններ ցուցաբերելու մարտավարությունից: Վրաստանում եւ Ուկրաինայում կրած պարտություններից հետո, դատելով Պուտինի հայտարարություններից, Ռուսաստանը նույնպես հրաժարվում է նման պահելաձեւից: Այսպիսով, պետք է սպասել, որ այդ տերությունների միջեւ մրցակցությունն ընդունելու է ավելի կոշտ բնույթ: Այս միտումի մասին է, թերեւս, վկայում 2005թ. սկզբին ԱՄՆ Պետդեպարտամենտի այն հայտարարությունը, թե Ռուսաստանը դեռ չի ձերբազատվել հակասեմիտիզմից:

Հայտնի է, որ սառը պատերազմում պարտություն կրելուց հետո Ռուսաստանը վերջնականորեն ծնկի չեկավ բացառապես իր միջուկային-հրթիռային զենքի առկայության շնորհիվ: Վերջին 1-2 տարիներին այդ

տերությունը, էապես ավելացնելով ռազմական ծախսերը (*բավական է նշել, որ եթե պետական պատվերը սպառազինությունների նոր տեսակների համար 2002թ. կազմում էր մոտ \$2,3մլրդ, ապա 2005-ին այն հավասար է արդեն մոտ \$5,7մլրդ-ի*), հետևողականորեն իրագործում է հրթիռային փորձարկումների մի մեծ շարք, որոնց նպատակն է կատարելագործել իր ռազմավարական զինանոցը: Անշուշտ, դա հետևանք է այն տնտեսական աճի, որ ունի Ռուսաստանը վերջին տարիներին: Այս հանգամանքը ստիպում է ԱՄՆ-ին շտապել իրագործելու իր ծրագրերը Ռուսաստանի հանդեպ:

Մասնավորապես, ԱՄՆ-ը չափազանց ակտիվացրել է տեղեկատվական գործողությունները՝ քարոզելով, որ արդեն 2005թ. Ռուսաստանում տեղի կունենա հեղափոխություն եւ Պուտինը ստիպված կլինի հեռանալ: Նկատենք, որ քարոզչությունը տվյալ պարագայում հաճախ կատարվում է հեղինակավոր փորձագետների կանխատեսումների տեսքով: Նշենք, որ Ռուսաստանն՝ իբրեւ հզոր գերտերություն, բացակայում է նաեւ Ազգային հետախուզական խորհրդի կանխատեսումներում:

Սակայն նման գործողությունները մարտավարական բնույթ են կրում եւ նպատակ ունեն ստեղծել որոշակի տեղեկատվական ֆոն: Հիմնական ծրագրերը, համաձայն տեղեկատվության այլ աղբյուրների, կապված են 2008թ. նախագահական ընտրությունների հետ, որոնց նախօրեին ԱՄՆ-ը փորձելու է նավթի գների կտրուկ իջեցումով «պայթեցնել» Ռուսաստանի տնտեսությունը, ստեղծել հեղափոխական իրավիճակ եւ իշխանության բերել իր թեկնածուին: *Այս առիթով նկատենք, որ ելնելով ամերիկյան պլանների ստանդարտ լինելու հանգամանքից՝ նման մի ծրագիր, կապված ապագա ընտրությունների հետ, կարող է գործել նաեւ ԳԳ-ի նկատմամբ:*

Ռուսաստանի հետ հարաբերություններում ԱՄՆ-ին լրացուցիչ շտապողականություն է հաղորդելու նաեւ ռուսների եւ չինացիների աճող ռազմավարական մերձեցումը: Այս համատեքստում պետք է կարելուրել ոչ միայն Ռուսաստանի կողմից ՉԺՀ (ինչպես նաեւ Հնդկաստանի) փաստացի սպառազինումը զենքի նորագույն տեսակներով: Ռուսաստան – ՉԺՀ ռազմավարական համագործակցության առումով շրջադարձային պետք է համարել վերջերս Պեկինում Սերգեյ Իվանովի արած այն հայտարարությունը, թե 2005թ. Չինաստանում տեղի են ունենալու ռուս-չինական համատեղ զորավարություններ: Այդ զորավարությունները ենթադրում են բավական խոշոր գործողություններ՝ հետեւակի, նավատորմիղների եւ ավիացիայի մասնակցությամբ:

Վերոհիշյալ հանգամանքներն արդեն դրդում են եւ շարունակելու են դրդել ԱՄՆ-ին հնարավորինս արագ լուծել խնդիրների այն համախումբը,

որոնք կապված են Ռուսաստանի հետ, քանի դեռ այդ երկիրը չի հասել հզորացման այն կետին, որից հետո դժվար է լինելու իրագործել ամերիկյան ծրագրերը: Նման գործելաոճը բխում է ԱՄՆ գերկանխարգելիչ ռազմավարության տրամաբանությունից: Այստեղից հետևում է նաև, որ մեր տարածաշրջանում եւ, մասնավորապես, ՀՀ-ում ԱՄՆ–Ռուսաստան մրցակցությունը պետք է որ սրվի:

Այս ամենի առումով, ՀՀ-ի համար պետք է ամրագրել նաև հետևյալ հանգամանքը: Արդեն իսկ միացյալ Արեւմուտքին հաջողվել է «կտրել» ռուսներից ՀՀ ընտրանու մի զգալի մասին: Այսօր հակառուսական տրամադրությունները ՀՀ քաղաքական եւ մտավոր ընտրանու շարքերում մեծ չափերի են հասել (ինչին, անշուշտ, նպաստել է նաև Ռուսաստանի անհամարժեք պահվածքը): Դա պայմանավորված է, առաջին հերթին, Արեւմուտքի կողմից «մարդկանց վրա» աշխատելու կարողությամբ եւ «ուղեղների լվացման» տեխնոլոգիաների կիրառմամբ: Կարելոր է նաև այն հանգամանքը, որ անուղղակի (վարկերի, ծրագրերի եւ այլ միջոցառումների միջոցով), իսկ հաճախ եւ ուղղակի կերպով ՀՀ ընտրանու շատ ներկայացուցիչներ նյութական աջակցություն են ստանում Արեւմուտքից: Այս ամենի, ինչպես նաև Ռուսաստանի՝ Վրաստանում եւ Ուկրաինայում կրած պարտությունների հետևանքով ՀՀ ընտրանու շրջանում խիստ վտանգավոր մտայնություն է ամրապնդվում, թե Ռուսաստանը «վերջացել» է եւ պետք է լիովին թեքվել դեպի ԱՄՆ եւ ԵՄ:

Մինչդեռ պետք է հաշվի առնել, որ Ռուսաստանն այսօր շարունակում է մնալ տարածաշրջանային ամենակարեւոր գործոններից մեկը, եւ կան բոլոր նախապայմանները կանխատեսելու, որ նրա դերակատարումն աճելու է: Այսպիսով, մեր ազգային շահերից բխում է, որ ՀՀ-ն շարունակի վարել հավասարակշռված քաղաքականություն եւ Միացյալ Արեւմուտքի, եւ Ռուսաստանի հետ: Այս խնդրում պետք է հաշվի առնել 20-րդ դարի սկզբի պատմական փորձը, երբ միակողմանի դիրքորոշումները ծանր հետևանքներ ունեցան հայության համար:

ՆԵՐԻՇԽԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Կարեն Վերանյան

2003թ. նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցած իշխանափոխության մեկ տարին համընկավ երկրի նախագահ Մ.Սահակաշվիլու «Ազգային շարժում» եւ վարչապետ Ջուրաբ ժվանիայի «Ժողովրդավարներ» կուսակցությունների պաշտոնական միավորման հետ, որոնք դեռ 2004թ. մարտին կայացած խորհրդարանական ընտրություններին հանդես եկան «Ազգային շարժում – ժողովրդավարներ» միասնական դաշինքով: Վրաստանի վերնախավը մեկ անգամ չէ, որ հնչեցրել է այդ կուսակցությունների միավորման անհրաժեշտության մասին: Սակայն մի շարք պատճառներով այն հետաձգվեց եւ ի վերջո հնարավոր դարձավ միայն մեկ տարի անց: Նոր միավորված «Միասնական ազգային շարժում» կուսակցության նախագահ ընտրվեց Մ.Սահակաշվիլին:

«Ազգային շարժման» եւ «Ժողովրդավարների» միավորումը, թերեւս, հետապնդում էր երկու նպատակ. նախ՝ բավականին խորացել են Մ.Սահակաշվիլու եւ ժվանիայի միջեւ եղած հակասությունները, եւ կուսակցությունների միավորման փաստը փորձ էր կանխելու երկրի ներքաղաքական հավանական պառակտումները: Երկրորդ՝ կուսակցությունների միավորումը Վրաստանի հասարակությանը վստահություն կներշնչեր իշխանությունների, երկրի վաղվա օրվա նկատմամբ: Եվ եթե հաշվի առնենք այն, որ երկրում լուրջ քայլեր գրեթե չեն ձեռնարկվել ժողովրդի սոցիալական պայմանները բարելավելու ուղղությամբ, ապա կուսակցությունների միավորումն իսկապես կարելուր նշանակություն պետք է ունենար Վրաստանի ղեկավարության դիրքերի ամրապնդման տեսանկյունից:

* * *

Վերլուծաբանների մի մասն անմիջական կապ է տեսնում երկրի նախագահի եւ վարչապետի միջեւ առկա տարածայնությունների եւ 2004թ. դեկտեմբերի 11-ին վերջինիս՝ Միացյալ Նահանգներ կատարած պաշտոնական այցելության միջեւ: Մասնավորապես, Ջ.ժվանիան, համաձայն որոշ տվյալների, փորձեց Մ.Սահակաշվիլուն ցույց տալ, թե բավականին լուրջ հեռարան ունի Միացյալ Նահանգներում: Ասում են, թե ԱՄՆ-ում նրան համակրում են ԱՄՆ բարձրաստիճան անձինք, այդ թվում եւ

Մադլեն Օլբրայթը (ըստ որոշ աղբյուրների, վարչապետին զգալի աջակցություն է ցույց տալիս նաև ԱՄՆ-ում գործող հայկական համայնքը՝ կապված նրա հայկական արձատների հետ): Բավականին ուշագրավ էր նաև այն, որ Միացյալ Նահանգներում Ազգային ժողովրդավարական ինստիտուտը Վրաստանի վարչապետին պարգևատրեց Հարիմանի մրցանակով:

Երկու բարձրաստիճան ղեկավարների միջև հակասություններն առավել դրսևորվեցին Վրաստանի կառավարությունում իրականացված դեկտեմբերյան կադրային վերադասավորումների ընթացքում, որոնք նաև ուղղված էին ժվանիայի դիրքերի թուլացմանը: Կադրային փոփոխություններից առանցքային պետք է համարել հատկապես երկրի նախկին գլխավոր դատախազ Ե. Երեքին գործերի նախարար Իրակլի Օկրուաշվիլու՝ պաշտպանության նախարարի պաշտոնին նշանակվելը: Երեսնամյա Օկրուաշվիլին դասվում է Վրաստանի այն քաղաքական գործիչների շարքին, որոնք առավել հակառուսական են, ագրեսիվ քաղաքականության կողմնակից:

Թեև Մ.Սահակաշվիլու խոսքերով՝ *«պաշտպանության նոր նախարարի գլխավոր խնդիրն է լինելու երկրի տարածքային ամբողջականության վերականգնումը, ինչի համար Իրակլի Օկրուաշվիլին եկել է պաշտպանության նախարարություն»*, այնուհանդերձ, խնդիրն, ըստ էության, ավելի լայն ընդգրկում ունի. ՆԱՏՕ-ին ինտեգրումն այսօր Վրաստանի արտաքին քաղաքականության կարեւորագույն գերակայություններից է, և Ի.Օկրուաշվիլու՝ պաշտպանության նախարարի պաշտոնին նշանակվելը իսկապես կարող է եական լիցք հաղորդել այդ գործընթացին: Ինքը՝ Օկրուաշվիլին, տվյալ փուլում պետության գլխավոր խնդիր հայտարարեց մարտունակ բանակի ստեղծումը՝ մասնավորապես նշելով. *«Մենք պետք է ամենք ամեն ինչ, որպեսզի 2006թ. Վրաստանը դառնա ՆԱՏՕ անդամակցության թեկնածու պետություն»*:

Մ.Սահակաշվիլու և Ի.Օկրուաշվիլու մտերիմ հարաբերությունները նոր երեւույթ չեն. դեռևս էդ. Շելարդնաձեի իշխանության օրոք, երբ Վրաստանի ներկայիս նախագահը զբաղեցնում էր արդարադատության նախարարի պաշտոնը, Ի.Օկրուաշվիլին նրա տեղակալն էր: Վերլուծաբաններից շատերն են կիսում այն կարծիքը, թե վերջինս զգալի ազդեցություն ունի Մ.Սահակաշվիլու վրա: Վրաց քաղաքական փորձագետ Պաթա Ջաքարաեիշվիլու խոսքերով՝ *«Սահակաշվիլին առանց Օկրուաշվիլու աշխատել ու կառավարել չի կարող»*: Քաղաքագետ Գիա Նոդիայի մեկնաբանությամբ՝ *«Իրակլի Օկրուաշվիլին մի մարդ է, որը մտերիմ է Սահակաշվիլու հետ, վայելում է նրա հատուկ վստահությունը: Նա գործում է վճռականորեն»*: Իսկապես, Իրակլի Օկրուաշվիլու քաղա-

քական կերպարը բավականին ազդեցիկ է Վրաստանի ներքաղաքական դաշտում: Նրա շուրջն են հավաքվել այնպիսի քաղաքական գործիչներ, ինչպիսիք են, օրինակ, երկրի խորհրդարանի պաշտպանության եւ անվտանգության հարցերով հանձնաժողովի նախագահ Գիվի Թարգամաձեն, գլխավոր դատախազ Ջուրաբ Ադեիշվիլին եւ այլոք (սոցիոլոգիական հարցման տվյալներով՝ Ի.Օկրուաշվիլին, Մ.Սահակաշվիլուց եւ օլիմպիական չեմպիոն Ջուրաբ Ջվիադաուրուց հետո, երրորդ ամենահայտնի վրացին է):

Կադրային փոփոխություններ իրագործվեցին նաեւ երկրի պետանվտանգության համակարգում: Ներքին գործերի եւ պետանվտանգության նախարարությունների լուծարմամբ ստեղծվեց նոր՝ ոստիկանության եւ անվտանգության նախարարությունը, որն այսուհետ ղեկավարելու է Սահակաշվիլու վստահելի համախոհներից Վանո Սերաբիշվիլին: Այսպիսով, վերջինիս եւ Օկրուաշվիլու նշանակումներով երկրի նախագահը կարողանում է առժամանակ ամրապնդել դիրքերը վերնախավում՝ լիակատար վերահսկողություն հաստատելով պետության ուժային կառույցների վրա: Իսկ նախկին պաշտպանության նախարար Գեորգի Բարամիձեն, որը հարում է վարչապետ Ջ.ժվանիայի թեւին (դեռեւս 1990թ. ձեւավորված «Վրաստանի կանաչների կուսակցության» հիմնադիրների շարքում էին Ջ.ժվանիան, Գ.Բարամիձեն), նշանակվել է եվրաստլանտյան կառույցների ինտեգրման հարցերով պետնախարար:

Քաղաքական փորձագետներից շատերի կարծիքով՝ կադրային այս վերադասավորումները ժվանիայի թեւի թուլացման մասին են խոսում: Ինչպես նշում է Իյա Անթաձեն, «միանշանակ է, որ ինչքան ընդլայնվում է Օկրուաշվիլու ազդեցությունը, այնքան թուլանում են ժվանիայի դիրքերը»:

2005 թվականի սկիզբն արդեն նշանավորվեց Իրակլի Օկրուաշվիլու եւ Գեորգի Բարամիձեի միջեւ տարածայնություններով: Պաշտպանության նորանշանակ նախարարը նախաձեռնեց Վրաստանի ռազմական տեսչությունում իրականացված կաշառակերության դեպքերի հետաքննություն, եւ կասկածյալների թվում է նաեւ, ըստ որոշ աղբյուրների, ուժային տեսչության նախկին ղեկավարը՝ Գ.Բարամիձեն: Թեեւ ս.թ. հունվարի 4-ին Օկրուաշվիլու կողմից հնչեցված՝ մեղադրվող բարձրաստիճան պաշտոնյաների ցանկում Բարամիձեի անունը չէր հիշատակվել, այնուհանդերձ, վերջինս բավականին մտահոգված է մնան զարգացումներով: Պաշտպանության նախկին նախարարը Օկրուաշվիլու գործողությունները հրապարակայնորեն որակել է որպես երկրի իշխանության պառակտման լրջագույն սպառնալիք:

Կառավարությունում ստեղծված քաղաքական անհարթություններն

այնքան էին անհանգստացրել Մ.Սահակաշվիլուն, որ վերջինս ստիպված էր ընդհատել Ուկրաինա կատարած այցը եւ վերադառնալ Թբիլիսի: Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ Օկրուաշվիլու եւ Բարամիձեի հետ, որին ներկա էր նաեւ երկրի վարչապետ Ջ.ժվանիան: Թեեւ Սահակաշվիլուն հաջողվեց հաշտեցման եզրեր գտնել երկու բարձրաստիճան պաշտոնյաների միջեւ, այնուամենայնիվ, այդ հակասությունները, ըստ երեւույթին, դեռ կխորանան:

Ի դեպ, որոշ վերլուծաբանների կարծիքով՝ Օկրուաշվիլին նախապես չէր համաձայնեցրել իր քայլերը Սահակաշվիլու հետ, եւ պաշտպանության նորանշանակ նախարարը, հավատարիմ իր ազրեսիվ հոգեկերտվածքին, ձգտել է ի սկզբանե ամրապնդել դիրքերը նոր ստանձնած պաշտոնում: Ինչպես նշում է իրավաբան Դավիթ Ուսուպաշվիլին, «Վրաստանում դեռեւս չի ձեւավորվել կառավարման մի այնպիսի համակարգ, որտեղ պաշտոնյաները երկրի շահերը վեր դասեն սեփական շահախնդրություններից, եւ որ երկրում իրականում եւ սահմանադրորեն գոյություն ունեն երկու պետական կենտրոն, որոնց առաջնորդներն են Սահակաշվիլին ու ժվանիան՝ այս կամ այն չափով իրենց մտերիմ մարդկանցով»:

Միաժամանակ, տարբեր լրատվամիջոցներում արդեն լուրեր են պտտվում Սահակաշվիլի-Օկրուաշվիլի եւ ժվանիա-Բուրջանաձե քաղաքական թեւերի հետագա պառակտումների (ըստ որոշ տվյալների, Օկրուաշվիլու՝ վարչապետի պաշտոնին նշանակվելու հավակնությունների) մասին: Թեեւ դժվար է միանշանակ հավաստել նման քաղաքական սցենարը, սակայն այն չպետք է բացառել: Նշենք, որ Սահակաշվիլին, գալով իշխանության, արդեն «ազատվել» է իր որոշ կողմնակիցներից, որոնք այսօր իսկ համալրում են երկրի ընդդիմության շարքերը: Խոսքը մասնավորապես վերաբերում է Վրաստանի նորաստեղծ պահպանողական կուսակցությանը, որի հիմնադիրներն են Սահակաշվիլու նախկին կողմնակիցներ, «Ազգային շարժում» կուսակցության նախկին գլխավոր քարտուղար Կոբա Դավիթաշվիլին եւ Ջվիադ Ջիձիգուրին:

Ինչեւէ, Վրաստանի կառավարությունում իրականացված կադրային փոփոխություններն, առաջին հերթին, միտված էին ուժեղացնելու Սահակաշվիլու իշխանական լծակները եւ միաժամանակ թուլացնելու ժվանիա-Բուրջանաձե կլանը: Միաժամանակ, Վրաստանի կառավարությունում առկա տարածայնությունները բացասաբար կանդրադառնան երկրի ղեկավարության հեղինակության վրա՝ ուժեղացնելով նրա հանդեպ հասարակության անվստահությունը:

ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԻՍԼԱՄԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ՇՈՒՐՋ **Սարգիս Հարությունյան**

Այս տարվա հունվարի 13-ին հայտնի դարձավ, որ ամերիկյան «Lockheed Martin Aeronautics» եւ «General Electric» ընկերությունները թուրքական «Turkish Aerospace Industries»-ում իրենց պատկանող բաժնետոմսերը վաճառել են թուրքական «Turkish Aircraft Industries» պետական ընկերությանը:

Ամերիկյան այդ ազդեցիկ ընկերությունների հեռանալը Թուրքիայի ռազմարդյունաբերության ոլորտի մեծությամբ երկրորդ խոշոր կազմակերպությունից, ուր 1980-1990-ական թթ. հավաքվում էին F-16 մարտական ինքնաթիռները, թերեւս, նշանակում է.

❖ առաջիկա ժամանակահատվածում այդ ընկերությունները հույսեր չեն կապում նոր պատվերների ստացման հետ,

❖ Թուրքիայի ռազմարդյունաբերության ոլորտում նման տեղաշարժերը նշանակում են թուրք-ամերիկյան հարաբերություններում հակասությունների, ըստ ամենայնի, խորացում,

❖ նման իրավիճակը թույլ է տալիս ենթադրել, որ միգուցե այդ հակասություններն այլեւս չի կարելի դիտարկել որպես կարճաժամկետ երեւոյթ, այլ հարկ է խոսել ավելի երկար ժամանակահատվածի մասին:

Արտաքին քաղաքական նախագծի էվոլյուցիայի շուրջ

Թուրքիայում աշխարհիկության իրական հենարանը ոչ թե բանակն է, այլ հարաբերություններն Արեւմուտքի հետ: Եթե դրանք լուրջ ճգնաժամի մեջ են, ապա երկարաժամկետ կտրվածքով բանակի դերակատարությունը չի կարող որոշիչ լինել:

Ըստ էության, Թուրքիայի Հանրապետության հասարակական կառուցվածքը իրենից ներկայացնում է արտաքին քաղաքական մի նախագիծ: Օսմանյան կայսրության անկումից հետո թուրք հասարակությունը չստացավ պահանջված ֆորմացիան: Փաստորեն, քեմալական էլիտան արտաքին քաղաքական կողմնորոշումն ընդունեց որպես հիմք հասարակական նոր կառուցվածքի ձեւավորման գործում: Ուստի եւ հասարակական հարաբերությունների շարժիչ ուժը Թուրքիայում դարձավ ոչ թե ներքին օբյեկտիվ էվոլյուցիան, այլ գաղափարախոսական ճգնաժամը արտաքին քաղաքականության մեջ:

Արդյունքում՝ իրաքյան պատերազմը շատ ավելի խոր հետեւանքներ է թողնում Թուրքիայի, քան, օրինակ, Սաուդյան Արաբիայի վրա:

Այն իրավիճակը, որը ստեղծվել է Եվրամիության հետ հարաբերություններում, եւս քիչ դրական բան է խոստանում Թուրքիային: Հարկ է ենթադրել, որ Եվրամիությանն անդամակցելու հետ կապված պաշտոնական Անկարայի դիվանագիտությունը ոչ թե նպատակաուղղված է Թուրքիա–Եվրամիություն հարթությանը, այլ, ըստ ամենայնի, թուրքական հասարակությանը:

Երկայուն կարելի է փաստել, որ, ընդհանուր առմամբ, Արեւմուտք-Թուրքիա հարաբերություններում ի հայտ եկած ճգնաժամը լուրջ մարտահրավեր է այդ երկրի հասարակական կարգին: Հետեւաբար, առաջիկա ժամանակահատվածը բնորոշվելու է թուրքական հասարակության համընդհանուր «ակտիվացմամբ»:

Հետառըպատերազմյան պատմություն

«Ակտիվացման» առումով հարկ է խոսել միայն համակարգից դուրս ուժերի մասին: Թուրքիայում, ըստ ամենայնի, նման ուժերի դերում հանդես են գալիս իսլամիստները:

Թուրքիայում ժամանակակից իսլամիստական արմատական տարրերի ձեւավորումն անցել է, այսպես ասած, «դասական» ուղի: Տարածված տեսակետի համաձայն, նախնական ազդակ են հանդիսացել ԽՍՀՄ ներխուժումը Աֆղանստան եւ ամերիկյան ԿՀՎ պայքարը խորհրդային 40-րդ արշավային բանակի դեմ, որի համար այն ժամանակ մոբիլիզացվեցին իսրայելական «Մոսադից» մինչեւ Եգիպտոսի «Մուսուլման եղբայրները»: Չնայած Թուրքիան հայտնի պատճառներով շատ զգույշ մոտեցավ մահմեդական եղբայրության գաղափարին եւ խիստ սահմանափակ մասնակցեց այդ նախաձեռնությանը (այդ տարիներին Թուրքիայում մեծ թափով պայքար էր ընթանում «Իսլամական մեծ արեւելյան ասպատակողներ» կազմակերպության դեմ, որը նպատակ էր հռչակել՝ Թուրքիայում հաստատել աստվածապետություն), սակայն թուրքական տարրը եւս ներկայացված էր Աֆղանստանում, որոնց մի մասը հետագայում վերադարձավ հայրենիք:

Հաջորդ գործոնն ընդունված է կապել 1983-1989թթ. Թուրքիայի վարչապետ, իսկ 1989-1993թթ. նախագահ Թուրգուօ Օզալի անվան հետ, որը, ինչպես հայտնի է, սուֆի մահմեդական էր՝ կապված «Նաքշբանդի» օթյակի հետ: Նրա կառավարման տարիները բարենպաստ էին՝ թուրքական հասարակություն քաղաքական իսլամի մուտք գործելու տեսանկյունից:

Նույն թուրքուհի Օզալի իշխանության տարիներին, ՔԲԿ-ի դեմ պայքարի նպատակով Անկարան բավականին մեծ ջանքեր գործադրեց թուրքական «Յըզբուլլահի» (մեծ մասամբ սուննի թուրք-քրդական իսլամիստական կազմակերպություն) ստեղծման ուղղությամբ՝ որպես թուրքիայի հարավարեւելյան նահանգներում ՔԲԿ-ին հակակշիռ:

Եվ վերջապես, ռազմական գործողությունները նախկին Հարավսլավիայում (1992-1995թթ.) եւ Չեչնիայում: Հայտնի է, որ 1992թ. բոսնիական Չեչնիցա քաղաքում կռվող «Մոջահեդների բրիգադում» կային նաեւ թուրքեր, որոնց մեծ մասը Բոսնիա էր մեկնել թուրքիայից՝ ըստ որոշ տեղեկությունների սերբերի դեմ ԿՀՎ ձեռնարկած կամպանիայի շրջանակներում: Այդ առումով կարելի է բավական բնութագրիչ համարել այդ տարիներին թուրքիայի վարչապետ Թանսու Չիլերի ուղեւորությունը Սարաեւո, ուր տիկին Չիլերը մեկնել էր՝ ի ցույց դնելու իր աջակցությունը բոսնիացի մահմեդականներին: Ինչ վերաբերում է Չեչնիային, ապա Հյուսիսային Կովկասի մարտերում թուրքական զինյալների մասնակցությունը հանրահայտ է:

Թուրքական «Ալ-Կաիդա»

Ըստ ամերիկյան աղբյուրների, «Ալ-Կաիդայի» թուրքական մասնաճյուղը ձեւավորվել է մոտավորապես 2001թ., երբ Աֆղանստանի Խոստ քաղաքի մոտ գտնվող «Խալդուն» ճամբարում էմիր Հաբիբ Աքդաս անունով անձնավորության շուրջ համախմբվեցին Աֆղանստանում մարտնչող թուրք իսլամիստները: Որոշ ժամանակ անց Աքդասը հանդիպում է «Ալ-Կաիդայի» ղեկավարներից Մուհամադ Աթեֆի, իսկ, ըստ որոշ տեղեկությունների, 2001թ. սեպտեմբերի 11-ից մեկ շաբաթ առաջ՝ նաեւ Ուսամա բեն Լադենի հետ:

2001թ. սեպտեմբերի 11-ից հետո թուրքական խումբը մեկնում է թուրքիա, ուր պետք է ծրագրավորեր եւ իրականացներ հարձակումներ ամերիկյան եւ իսրայելական թիրախների դեմ՝ դեսպանատներ, հյուպատոսություններ, ռազմականայաններ եւ այլն: Ի վերջո, գործողությունները հանգում են 2003թ. Ստամբուլի նոյեմբերյան ակցիաներին: 2003թ. նոյեմբերի 15-ին Ազադ Էկինչիի ղեկավարած խումբը պայթեցրեց Ստամբուլում գտնվող հրեական «Բեթ Իսրայել» եւ «Նեւե Շալոմ» սինագոգները: Հինգ օր անց Ֆերիդուն Ուղուրլուի ղեկավարած խումբը մոտ 500 կգ-ոց պայթուցիկ օգտագործեց HSBC բանկի Ստամբուլի մասնաճյուղի եւ Մեծ Բրիտանիայի հյուպատոսության դեմ կազմակերպած հարձակումների ժամանակ: Չոհվեցին մոտ 60 հոգի:

Գիշտ է, բավականին կարճ ժամանակ անց ահաբեկչական ցանցը

վնասազերծվեց, սակայն ամերիկյան, բրիտանական եւ իսրայելական հատուկ ծառայությունների կարծիքով՝ վտանգը տակավին պահպանվում է:

Յետեւութուններ

Թուրքիայում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները իսլամական արմատականության ծավալման համար: Ընդ որում, դրա համար կան առնվազն երկու նպաստավոր գործոններ:

Առաջին՝ Թուրքիան, հանդիսանալով մահմեդական երկիր, չէր կարող զերծ մնալ վերջին 30-40 տարում իսլամական միջավայրում ընթացող փոփոխություններից: Ավելին՝ աշխարհիկության պահպանմանն ուղղված ռազմավարության բավականին կոշտ տարիները եւ հատկապես լուրջ անհաջողություններն այդ ռազմավարության իրականացման գործում, թուրք հասարակության ներսում իսլամի նկատմամբ պահանջարկի աճի պատճառ են հանդիսացել: Այդ առումով, Թուրքիան «զոհ գնաց» նաեւ հետսառըպատերազմյան ինտեգրային: Սառը պատերազմի ավարտը եւ հատկապես Խորհրդային Միության փլուզումն իրենց ազդեցությունն ունեցան համաշխարհային քաղաքականության փիլիսոփայության վրա, որի արդյունքում փոխվեց բաժանարար գծերի տրամաբանությունը, հետեւաբար՝ նրանց աշխարհագրական փոխդասավորվածությունը: Թուրքիան աստիճանաբար դուրս է մնում Արեւմուտք հասկացությունից:

Երկրորդ՝ չնայած մոտ քսան տարվա փաստացի ռազմական գործողությունների, Անկարան չկարողացավ լուծել քրդական հարցը: Յնարավոր է, որ հետագա ինտեգրացիան արեւմտյան համակարգերում (առաջին հերթին՝ Եվրամիությանը) հարցը սառեցներ կամ նրան տար միջին ժամանակահատվածի մի լուծում, սակայն այլեւս ակնհայտ է, որ գործընթացը չի զարգանում այդ ուղղությամբ: Ինքը՝ թուրքական պետությունը, հարցի լուծման համար ունի սահմանափակ աշխարհայացքային պաշարներ: Խոշոր հաշվով այն կարող է առաջարկել երկու ուղի՝ ազգայնականություն եւ իսլամ: Առաջինը, ըստ էության, բացառվում է, քանի որ ազգայնականության վրա են հենվում քրդերը. այդ պարագայում թուրքական ազգայնականությունը կարող է միայն արագացնել պետության մասնատման գործընթացը: Յետեւաբար, միակ հնարավոր լուծում կարող է համարվել իսլամական միջավայրի ստեղծումը, հատկապես եթե հաշվի առնենք վերոհիշյալ պահանջարկի առկայությունը: Ուստի պատահական չէ չափավոր իսլամական «Արդարություն եւ զարգացում» կուսակցության երեւոյթը եւ ընդհանրապես այդ հարցում թուրքական Գլխավոր սպայակույտի հայացքների համեմատաբար մեղմացումը:

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

2004թ. վերջին ամիսներին հատուկ լարվածությամբ սկսեցին քննարկվել Եգիպտոսի միջուկային ծրագրին վերաբերող հարցերը: Նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին որոշ արեւմտյան լրատվամիջոցներ հայտարարեցին, որ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) աշխատակիցները Եգիպտոսում հայտնաբերել են գաղտնի միջուկային ռազմական ծրագրի հետքեր: Հոդվածը նվիրված է Եգիպտոսի շուրջ առաջացած իրավիճակին եւ դրա, մեր կարծիքով, իրական պատճառներին:

Փաստեր միջուկային ծրագրի վերաբերյալ

1990-ական թվականներին ԱԷՄԳ դիտորդների՝ Եգիպտոսում կատարած ստուգումները ցույց տվեցին, որ այս պետությունը միջուկային հետազոտություններին առնչվող բավականին զարգացած գիտական բազա ունի եւ որ միջուկային հետազոտությունները մեծ մասամբ առնչվում են գիտատեխնիկական ոլորտներին: Եգիպտոսի միջուկային ծրագրի առկայությունը հիմնականում պայմանավորված էր նախկինում ԽՍՀՄ ակտիվ մասնակցությամբ երկրի էներգետիկայի եւ գիտության զարգացմանը: Սակայն, ինչպես 90-ականներին նշում էին ԱԷՄԳ դիտորդները, Եգիպտոսը նպատակ չունեւ ստեղծել միջուկային զենք եւ այդ ուղղությամբ ոչ մի աշխատանք չէր տանում:

Եգիպտոսում առկա են ուրանի բավականին մեծ պաշարներ, որոնք առայժմ հայտնաբերված են չորս հանքավայրերում: 1995-ին Եգիպտոսը հայտարարեց, որ պատրաստվում է սեփական ուժերով ստեղծել ուրանի վերամշակման եւ հարստացման գործարան: Սակայն միջազգային հանրության ճնշման տակ առաջին հերթին ԱՄՆ աշխատանքներն այդ ուղղությամբ բավականին դանդաղ են ընթանում:

1961թ. ԽՍՀՄ աջակցությամբ Եգիպտոսում գործարկվեց 2մվտ հզորությամբ գիտահետազոտական միջուկային ռեակտորը: 1991 թվականին ՅՆԴկաստանի հետ ստորագրված պայմանագրի համաձայն, ռեակտորի հզորությունը 1995-ին բարձրացվեց 5մվտ-ի: Ավելի քան 40 տարի այս ռեակտորի շնորհիվ Եգիպտոսում պատրաստվել են մի քանի հարյուր բարձրակարգ մասնագետներ, որոնք այսօր աշխատում են միջուկային հետազոտությունների ոլորտում:

1997 թվականին Եգիպտոսը Արգենտինայից գնեց ETRR-2 գիտահետազոտական ռեակտոր՝ 22մվտ հզորությամբ, որի միջուկային վառելանյութը, ըստ միջպետական պայմանագրի, մատակարարվում է նույն Արգենտինայի կողմից:

Երկրի միջուկային հետազոտությունների կենտրոնն Ինշասայում ընդհանուր առմամբ բավականին զարգացած եւ աշխատանքի հարուստ փորձ ունեցող հաստատություն է, որը գործնականում կարող է օգտագործվել նաեւ ռազմական հետազոտությունների համար: Սակայն մինչեւ վերջերս ոչ մի հայտարարություն այն մասին, որ Եգիպտոսը գաղտնի հետազոտություններ է կատարում միջուկային զենք ստեղծելու ուղղությամբ, չէր արվել:

Իրավիճակի լարվածության բուն պատճառները

2004 թվականի նոյեմբերին արեւմտյան մի քանի թերթերում հրապարակվեցին հոդվածներ այն մասին, որ ԱԷՄԳ տեսուչները Եգիպտոսում հայտնաբերել են գաղտնի ռազմական միջուկային հետազոտությունների հետքեր, որոնք էլ, այսպես կոչված, «եգիպտական սկանդալի» սկիզբ հանդիսացան: Մի քանի շաբաթ անց նոր հոդվածներ հրապարակվեցին այն մասին, որ իրականում ԱԷՄԳ տեսուչները դեռ 2003-ին են հայտնաբերել միջուկային ծրագրի հետքերը, սակայն ԱԷՄԳ տնօրեն Էլ-Բարադեյի ճնշման տակ ստիպված են եղել թաքցնել հայտնաբերված փաստերը ԱԷՄԳ անդամ երկրներից: Ֆրանսիական «Լիբերասիոն» թերթում հրապարակվեց տեղեկություն այն մասին, որ Եգիպտոսը սերտ կապերի մեջ է գտնվել Լիբիայի համապատասխան գիտահետազոտական հիմնարկությունների եւ կենտրոնների հետ: Բացի դրանից, ըստ թերթի հրապարակման, Լիբիան մինչեւ 2003-ի դեկտեմբերը հետազոտություններ է կատարել միջուկային զենք ստանալու ուղղությամբ ոչ միայն իր, այլ նաեւ Եգիպտոսի համար: Լիբիական գիտնականների բուլոր ձեռքբերումները, ըստ հրապարակված հոդվածների, տրամադրվել են նաեւ Եգիպտոսին:

Ակնհայտ է, որ նոր «միջուկային սկանդալը» կարող է հիմնականում պայմանավորված լինել ԱԷՄԳ գլխավոր տնօրենի առաջիկա ընտրություններով: Առաջին հերթին աչքի է զարնում այն փաստը, որ ներկայիս գլխավոր տնօրեն Մ. Էլ-Բարադեյը Եգիպտացի է: Սա տեղիք է տալիս եզրակացնելու, որ «եգիպտական հարցում» նա անաչառ չէ եւ իր մասնագիտական աշխատանքներն իրականացրել է՝ հաշվի առնելով իր պետության ազգային շահերը:

Նշենք, որ ամերիկյան եւ իսրայելական մամուլը 2005-ի սկզբին

չնվազեցրեց Եգիպտոսի միջուկային ծրագրին վերաբերող լրատվական արշավի ուժգնությունը:

Ի՞նչ նպատակ կարող են հետապնդել այս վերջին զարգացումները Եգիպտոսի միջուկային ծրագրի շուրջ:

Նպատակ 1: ԷԼ-Բարադեյի հեռացումը ԱԷՄԳ գլխավոր տնօրենի պաշտոնից:

Այն, որ Եգիպտոսն է դարձել ամերիկյան լրատվամիջոցների հարձակման թիրախ, պատահական չէ: Այս փաստն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ ԷԼ-Բարադեյը Եգիպտացի է եւ կարող է հեշտությամբ մեղադրվել ոչ անաչառ լինելու մեջ հենց իր հայրենական միջուկային ծրագրի կտրվածքով: 2005 թվականին կայանալու են ԱԷՄԳ գլխավոր տնօրենի նոր ընտրություններ, որոնց արդեն երրորդ անգամ մասնակցելու է Մ. ԷԼ-Բարադեյը, որին պաշտոնապես պաշտպանություն են խոստացել Ռուսաստանը, Չինաստանը եւ Ֆրանսիան: ԷԼ-Բարադեյի վերընտրությանը դեմ հանդիսացող հիմնական անդամ երկրներն են Միացյալ Նահանգները եւ Մեծ Բրիտանիան, չնայած վերջինս 2004թ. մի քանի անգամ հայտարարել է, թե միանգամայն դրական է գնահատում ԷԼ-Բարադեյի գործունեությունը ԱԷՄԳ գլխավոր տնօրենի պաշտոնում:

ԷԼ-Բարադեյին վերընտրվելու համար պետք է ստանալ քվեարկող 65 անդամների 2/3-ի աջակցությունը: Վերընտրությունը տեղի չի ունենա, եթե Եգիպտացուն դեմ քվեարկեն ընդհանուր առմամբ 22 հոգի: Մինչ «Եգիպտական սկանդալի» սկիզբը ԷԼ-Բարադեյի վերընտրվելու հնարավորությունները գնահատվում էին մոտավորապես 70 տոկոս: Սակայն ԱԷՄԳ գործադիր տնօրենը, ինչպես ասում են, ձեռքերը ծալած չի նստում: Վերջին ամիսների ընթացքում նա մի քանի բավականին կոշտ հայտարարություններ արեց Իսրայելի նկատմամբ՝ այն համարելով զանգվածային ոչնչացման զենքի չտարածման գործին սպառնացող հիմնական պետություն: Սրանով ԱԷՄԳ գլխավոր տնօրենը սկսել է իր հակազորիդ ամերիկացիների դեմ, որոնք միջազգային աստիճաններում հանդիսանում են Իսրայելի հիմնական պաշտպանը: Մյուս կողմից՝ ԷԼ-Բարադեյի հակա-իսրայելական ճառերը մեծ արձագանք են գտնում արաբական եւ մահմեդական այլ պետություններում, որոնք նրա պաշտոնից հեռացման հարցը հեռանկարում կարող են դիտարկել որպես նոր «հակամահմեդական ակցիա»:

ԱՄՆ-ը ամեն ինչ պետք է անի ԷԼ-Բարադեյին պաշտոնից զրկելու համար: Եգիպտացին վերջին 3 տարիների ընթացքում առնվազն երկու անգամ, մեղմ ասած, հիասթափեցրել է ամերիկացիներին: Առաջին անգամ՝ երբ հրաժարվեց հաստատել ամերիկացիների այն պնդումները, թե Իրաքը

տիրապետում է զանգվածային ոչնչացման զենքի, երկրորդ անգամ՝ երբ ամերիկացիների կարծիքով՝ բավականին մեղմ վերաբերմունք դրսևորեց Իրանի նկատմամբ՝ չկատարելով ոչ մի հայտարարություն, որով Իրանը ուղղակիորեն կմեղադրվեր միջուկային զենք ստեղծելու մեջ:

Նպատակ 2: ԱԷՄԳ հեղինակագրկմանն ուղղված ակցիա:

Արդեն իսկ ամերիկացիների համար պարզ է դարձել, որ ԱԷՄԳ-ը երբեք իրավական եւ բարոյական տեսակետից շոշափելի աջակցություն ցույց չի տա ԱՄՆ «հակաահաբեկչական» արշավին, որի հաջորդ գոհը, քիչ հավանական է, բայց կարող է դառնալ Իրանը: Ազգային պատկանելության պատճառով Եգիպտոսի միջուկային ծրագիրը թաքցնող ԷԼ-Բարադեյը օրերից մի օր կարող է մեղադրվել կրոնական պատկանելության պատճառով Իրանի միջուկային ծրագիրը թաքցնելու մեջ:

ԱԷՄԳ վարկաբեկումը կարող է ԱՄՆ-ին «բարոյական» իրավունք տալ պրոբլեմատիկ, միջուկային զենք «ստեղծող» պետությունների հետ խոսել ինքնուրույնաբար, սեփական միջոցներով:

Նպատակ 3: Ռուս-եգիպտական համագործակցության խոչընդոտում:

Նոյեմբերին Ռուսաստանի Դաշնության ղեկավարությունը հայտարարեց, որ Եգիպտոսի հետ սկսվել են բանակցություններ երկրի տարածքում ատոմային էլեկտրակայաններ կառուցելու շուրջ: Ռուսաստանը, ըստ ոչ պաշտոնական տվյալների, Եգիպտոսին ներկայացրել է երեք էներգաբլոկերով ԱԷԿ կառուցելու առաջարկ-փաթեթ, որն արժանացել է Եգիպտոսի ղեկավարության հավանությանը: Պարզ է, որ վերջին զարգացումները Եգիպտոսի միջուկային ծրագրի շուրջ կարող են լուրջ վնաս հասցնել ԱԷԿ-ի կառուցման պլաններին:

Ինչպես տեսնում ենք, իրավիճակը ԷԼ-Բարադեյի եւ Եգիպտոսի շուրջ լարված է եւ կարող է բավականին լուրջ հետեւանքներ ունենալ ԱԷՄԳ եւ միջազգային իրավիճակի վրա ընդհանրապես: Դրական հետեւանք կարելի է համարել այն, որ «Եգիպտական սկանդալի» արդյունքում ինտենսիվորեն սկսեցին քննարկվել նաեւ Իսրայելի միջուկային ծրագիրը եւ Մերձավոր Արեւելքում միջուկային զենքից ազատ գոտի ստեղծելու հարցը, որը կարելի էր նշանակություն ունի ողջ տարածաշրջանի անվտանգության համար:

ԻՍԼԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՇՈՒՐՋ Արաքս Փաշայան

VIII-IX դարերում մահմեդական աստվածաբան իրավագետների շրջանում լուրջ վեճեր էին ընթանում հասարակական եւ սոցիալական ոլորտը կանոնակարգող նորմատիվների ստեղծման շուրջ: Սա իսլամի պատմության այն ժամանակահատվածն էր, երբ Ղուրանն ու մարգարեի հաղիսներն արդեն ստեղծված էին, որոնք էլ իսլամական իրավունքի սկզբնաղբյուրներ դարձան: Եթե դրանցում որեւէ հարցի պատասխանը բացակայում էր, ապա կիրառվում էր մահմեդական համայնքի հավաքական կարծիքը կամ համաձայնությունը՝ *իջմա'ան*: Առանձին դեպքերում իրավագետները՝ *ֆակիհները*, դիմում էին *իջթիհադի*՝ ռացիոնալիստական մեթոդին: Այսինքն՝ հարցերի պատասխանները քաղվում էին այլաբանական հայտնի դրույթներից՝ ըստ անալոգիայի (համանմանության), որ կոչվում է *կիյաս*: Կիրառվում էր նաեւ այլ մեթոդ՝ *ռայյը*՝ ազատ, անհատական կարծիքը:

X դարում իսլամական իրավական հայեցակարգը՝ *ֆիկհը*, ձեւավորվեց որպես ինքնուրույն դիսցիպլին: Իսլամական իրավունքն առանձնացավ իսլամական տեսական աստվածաբանությունից (*իլմ ալ-քալամից*): *Ֆիկհի* առարկան դարձավ շարիաթի գործնական նորմերի կամ իրավական կանոնների մշակումը: Սուենի իսլամի շրջանակներում ձեւավորվեցին կրոնական-իրավական չորս դպրոցներ՝ *մազհաբներ*: Դրանք են՝ հանաֆիական (հիմնադիրը՝ Աբու Հանիֆա), մալիքիական (հիմնադիրը՝ Մալիք իբն Անաս), շաֆիական (հիմնադիրը՝ աշ-Շաֆի'ա) եւ հանբալիական (հիմնադիրը՝ Ահմադ իբն Հանբալ) դպրոցները, որոնցից յուրաքանչյուրը մշակել է Ղուրանի եւ սուենայի դրույթների մեկնաբանման իր եղանակը՝ հենվելով որոշակի մեթոդի վրա: Ներկայումս իսլամի ավանդական տարածման շրջաններում շրջանառվում է հիշյալ *մազհաբներից* որեւէ մեկը: Շիական շրջանակներում իրավական դպրոցներից տեսական եւ գործնական նշանակություն ունեն ջաֆարիականը, զեյդիականը, իսմայիլականը եւ այլն: *Մազհաբներից* ամենաարմատականը համարվում է հանբալիական դպրոցը, որը Ղուրանը, իսլամական դոգմաները, հնից եկող ավանդույթներն ընկալում է բառացիորեն, դեմ է Ղուրանի եւ հաղիսների ազատ մեկնությանը, ամեն տեսակ նորարարությանը:

X դարում միաժամանակ ամրագրվեց այն գաղափարը, որ *իջթիհադի* «դարպասները փակված» են, այսինքն՝ *ֆակիհները* պետք է հիմնվեն

արդեն իսկ գոյություն ունեցող իրավական դպրոցների վրա: Այդ շրջանից ի վեր անհատն անկարող է դառնում իրավական կանոնների որոնման փորձեր անել:

Ֆիկիը կարելի է մեկնաբանել որպես իսլամական դոգմաների մեկնաբանման որոշակի հայեցակարգ: Այդ մեկնաբանությունները շատ կարելուր են, քանի որ մատնանշում են իսլամական նորմերի օգտագործման կերպն իսլամական հասարակություններում, հիմնավորում են շարիաթը եւ ցույց տալիս այն անշեղորեն կիրառելու հանգամանքը: Շարիաթը ներառում է կրոնական դոգմատիկա եւ էթիկա, ինչպես նաեւ նորմատիվներ, որոնք կանոնակարգում են հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Թե՛ շարիաթը եւ թե՛ *Ֆիկիը* կրոնական-իրավական հիմքի վրա կանոնակարգում են փոխհարաբերություններն իսլամական *ուլմաայի* ներսում:

Իսլամի կայացման սկզբնական շրջանում (մինչեւ VIII դարը) *Ֆիկիը* նույնացվում էր շարիաթի հետ եւ նկատի առնում աստծո կողմից մարդկանց ցույց տրված այն ճանապարհը, որն առաջնորդում էր դեպի դրախտ: Այս շրջանում *Ֆիկիը* ու շարիաթը հանդես չէին գալիս որպես հատուկ իրավաբանական կատեգորիաներ: Ժամանակի ընթացքում, որպես իրավագիտական հասկացություններ, *Ֆիկիը* ու շարիաթը առանձնացան: *Ֆիկիի* նորմերը, ի տարբերություն շարիաթի, կարող են անկատար լինել եւ իրավական դպրոցների տեսանկյունից՝ տարբեր, կամ էլ ժամանակի ընթացքում փոփոխության կարիք ունենալ: Այստեղից էլ՝ շարիաթի, որն աստվածային բնույթ ունի, եւ *Ֆիկիի* տարբերությունը: Այսինքն՝ *Ֆիկիը* պետք է դիտարկել որպես ռացիոնալիստական գործունեության արգասիք, որ փոխակերպել է Ղուրանի եւ հադիսների առանձին դրույթներ գործնական իրավական նորմերի: Այլ կերպ ասած՝ *Ֆիկիի* ոլորտը սկսվում է այնտեղ, որտեղ վերջանում է շարիաթը: Ձեւավորվելով աստվածային հայտնություններից՝ *Ֆիկիը* ձեռք է բերում գործնական եւ տեսական նշանակություն, սահմանում հարցերի այն շրջանակը, որոնք արդեն իսկ գոյություն ունեն, մշակում օրենքի մանրամասները՝ հիմնավորելով շարիաթը: Իսլամագետ Մ.Ռուֆվենի կարծիքով՝ օրենքն այնպիսի հաջողությամբ է զարգացել իսլամում, որ չափազանցություն չի լինի իսլամական մշակույթը բնորոշել որպես իրավական մշակույթ:

Ուշագրավ է, որ ժամանակակից իսլամական իրավական միտքը շարիաթ եւ *Ֆիկի* հասկացությունների հարաբերակցության մասին տարբեր տեսակետներ ունի: Համաձայն դրանցից մեկի՝ շարիաթն ու *Ֆիկիը* հոմանիշներ են: *Ֆիկիը* նույնպես աստվածային բնույթ ունի, քանի որ ծագում է աստվածային հայտնություններից: Մեկ այլ տեսակետով՝ *Ֆիկիը* շարիաթի մեկնությունն է եւ չի կարող շարիաթի մաս լինել: Շարիաթը *Ֆիկիի* համար ծառայում է որպես սկզբնաղբյուր:

XX դարի 1940-70-ականներին անկախ պետությունների ձեւավորումից հետո, իսլամի ավանդական տարածման շրջաններում զգալի չափով իրավական դաշտ ներմուծվեց իրավունքի արեւմտաեվրոպական մոդելը: Իսլամական իրավունքի սահմանադրական ճանաչումը եւ այն՝ օրենսդրության աղբյուր ծառայեցնելու փաստը առաջին անգամ արձանագրվեց 1950թ. Սիրիայի սահմանադրության մեջ, որից հետո այս մոտեցումը որդեգրեցին մահմեդական ուրիշ երկրներ: Գիշտ է, ներկայումս մահմեդական երկրներից ոչ մեկում *ֆիկհը* չի գործում իր ավանդական ձեւով եւ ինքնուրույն, սակայն եւ ոչ մի մահմեդական երկրում այն չի կորցրել իր դիրքերը գործող իրավական նորմերի համակարգում: Բացառություն է կազմում միայն Թուրքիան, որտեղ 1924թ. խալիֆայության տապալումից եւ աշխարհիկ պետության ստեղծումից հետո *ֆիկհն* ամբողջովին դուրս մղվեց բոլոր, ներառյալ ամուսնական-ընտանեկան հարաբերությունները կարգավորող ոլորտից:

Ուսումնասիրողները իսլամական իրավունքի կիրառման տեսանկյունից մահմեդական պետությունների միջեւ տարբերություններ են անցկացնում: Պետական կառավարման մեջ եւ իրավական դատական համակարգում իսլամական նորմերի եւ սկզբունքների բացառիկ լայն ընդգրկմամբ առանձնանում են Սաուդյան Արաբիայի Թագավորությունն ու Իրանի Իսլամական Հանրապետությունը: Սաուդյան Արաբիայում, որը հանբալիական *մազհաբի* տարածման շրջանն է, շարիաթը եւ Ղուրանը փոխարինում են քրեական եւ քաղաքացիական օրենսգրքին: Իրանում (որտեղ կիրառվում է ջաֆարիական *մազհաբը*) 1979թ. իսլամական հեղափոխությունից հետո հասարակական-քաղաքական, իրավական եւ տնտեսական ոլորտներն իսլամականացան: Այս երկրներում գործում են շարիաթական դատարաններ (որոնք խստորեն կիրառում են իսլամական իրավունքի նորմերը), ինչպես նաեւ իսլամական տեսչական եւ վերահսկողական մարմիններ (*խիսբա*), որոնք առանց դատավարության կարող են պատժել իսլամական բարոյականության եւ էթիկայի նորմերը խախտողներին:

Այսօր իսլամական իրավունքի դաշտը կարգավորում է հարաբերություններն իսլամական հասարակության ներսում՝ անհատի եւ պետության, անհատի եւ հասարակության, միմյանց՝ անհատների միջեւ, իրավական, տնտեսական, սեփականատիրական, աշխատանքային, ամուսնության եւ ամուսնալուծության, ժառանգության, դատախարակության, բարոյականության եւ այլ ոլորտներում:

Մահմեդական առանձին պետություններում (Մարոկո, Հորդանան, Պակիստան, Սաուդյան Արաբիա, Ծոցի երկրներ եւ այլն) մահմեդականները քրեական պատասխանատվություն են կրում ռամադան ամսվա

պահքից խուսափելու համար: Մահմեդական առանձին երկրներում պետական պաշտոնյաներին ու ծառայողներին աշխատանքի ժամին թույլատրվում է աղոթել (որոշ երկրներում այն արգելված է): Իրանում եւ Սաուդյան Արաբիայում պատիժներ են սահմանված նրանց համար, ովքեր խախտում են մահմեդական ավանդույթը հազուսուտի մեջ կամ խախտել են հասարակական վարքականոցի շարիաթական նորմերը: Կրոնական բնույթ ունի նաեւ այն օրենքը, որն արգելում է մահմեդական կնոջն ամուսնանալ ոչ մահմեդականի հետ: Ամուսնական պայմանագրի ստորագրման վկաները պետք է լինեն մահմեդականներ: Իսլամական իրավունքը պնդում է, որ երկրի առաջնորդը պետք է լինի մահմեդական եւ պետք է առաջնորդվի իսլամի սկզբունքներով: Սեփականության մասին իսլամական օրենքում նշված է, որ ցանկացած սեփականություն պատկանում է աստծուն: Դատարանում երդվում են աստծո անունով, որի օգնությամբ մեղադրյալը կարող է ապացուցել իր անմեղությունը:

Իսլամական քրեական օրենսգրքում հավատուրացությունը դիտվում է քրեական հանցանք: Մարդասպանության համար հանցագործը մահվան է դատապարտվում: Սակայն անկախ դատավարությունից, նա մեղսավոր է եւ ահեղ դատաստանի օրն արժանանալու է գեհեմի կրակներից: Մահմեդական որոշ երկրներում առ այսօր գործում են հատուկ պատիժներ գողության եւ ամուսնական դավաճանության համար: Քուվեյթի եւ Բահրեյնի քրեական օրենսգրքում պատիժներ են սահմանված ոգելից խմիչքների օգտագործման եւ մոլեխաղերով զբաղվելու համար: Քուվեյթում 1982-ից ոգելից խմիչքների արգելքը տարածվում է անգամ օտարերկրյա դիվանագետների վրա:

Մահմեդական երկրներում գոյություն ունի կայացած իրավադատական համակարգ, որը ձեւավորվել է իսլամական պետության կայացմանը զուգընթաց: Դրա սկզբնավորումը կապված է Մուհամմադ մարգարեի հետ, որն ինքն էր կարգավորում մահմեդական համայնքի կամ մահմեդականների ու ոչ մահմեդականների միջեւ ծագած վեճերը: Մարգարեի, իսկ հետագայում՝ նրա համախոհների ու զինակիցների կողմից այս ոլորտում առաջ քաշված դրույթները հիմք դարձան մահմեդական իրավագետների համար՝ ձեւավորելու իսլամական դատական համակարգը: Մահմեդական երկրների մեծ մասում ներկայումս պահպանվել են շարիաթական դատարաններ, իսկ մի քանի երկրներում (օրինակ՝ Եգիպտոս), դրանք լուծարվել են:

Ուշագրավ է դատաստանի մասին իսլամի դոգմատիկ պատկերացումը: Իսլամում բարձրագույն դատավորն աստված է: Մարդու կյանքը գտնվում է նրա մշտական հսկողության ներքո, որը տեսնում եւ գնահատում է մարդու ցանկացած քայլը կրոնական նորմերի համապատաս-

խանության տեսանկյունից եւ ըստ այդմ՝ պատժելու է նրան ահեղ դատաստանի օրը:

Իսլամական սկզբունքներն ու նորմերը որոշակի ազդեցություն ունեն նաեւ պետական կառուցվածքի վրա: Ասվածի ապացույցն է այն, որ մահմեդական որոշ երկրներում (օրինակ՝ Ծոցի երկրներ) պառլամենտին կարող է փոխարինել Խորհրդակցական մարմինը՝ Մաջլիս աշ-Շուրան, որը ձեւավորվում է բացառապես Խորհրդակցության իսլամական սկզբունքի հիման վրա:

Ներկայումս մահմեդական երկրներում, ընդհանուր առմամբ, *ֆիկհի* զգալի տեղ են տալիս՝ այն դիտարկելով որպես օրենսդրության ձեւավորման աղբյուր: Մահմեդական երկրների մեծ մասի սահմանադրության մեջ *ֆիկհի* նորմերն արժեւորված են: *Ֆիկհը* շարունակում է հանդես գալ որպես իրավունքի ձեւ: Գիշտ է, այն չունի ինքնուրույն կիրառման ոլորտ, սակայն դրա դրույթներն ամրագրվում են գործող օրենսդրության հոդվածներում:

ՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՆ ԱԼԵՆ ՄԵՆԿԻ

*Ալեն Մենկը ֆրանսիացի ճանաչված տնտեսագետ է:
Ներկայումս «AM Conseil» խորհրդատվական ընկերության
եւ «Le Monde» թերթի դիտորդական խորհրդի նախագահն է:*

Այսօր տրանսատլանտյան հարաբերությունները ծանր ժամանակաշրջան են ապրում, եւ խնդիրն այստեղ ո՛չ միայն եւ ո՛չ այնքան Իրաքն է: Մենք՝ Յին աշխարհի բնակիչներս, Միացյալ Նահանգներին նայում ենք մաշված ակնոցներով՝ առաջվա պես տեսնելով մեզ հարազատ երկրի: Սակայն ԱՄՆ-ը կտրուկ կերպարանափոխվում է, քանզի գործի է անցել նոր էթնիկական «ծուլման կաթսան»:

Երեկ ԱՄՆ-ը Արեւմուտքի երկիր էր: Այսօր այն վերածվում է «տիեզերական երկրի»: Մեր օրերի Ամերիկան ոչ միայն հին արեւմտյան քաղաքակրթության, այլեւ աշխարհի բոլոր ծագերի քաղաքակրթությունների «ծեփվածք» է:

Ինչպիսի տեսք կունենար Միացյալ Նահանգները, եթե հնդիկները կամ, ասենք, չինացիները լինեին նույնպիսի ազդեցիկ ուժ, ինչպիսին հրեաները կամ անգլոսաքսոնյան սպիտակամորթ բողոքականներն են, իսկ լատինաամերիկացիներն ունենային նույն քաղաքական կշիռը, ինչ իռլանդացի կաթոլիկները: Այս հարցը չափազանց արդիական է. Ամերիկայում ընտրախափի փոփոխությունն անխուսափելի է: Բավական է հայացք գցել ամերիկյան համալսարանների այսօրվա ուսանողներին, որպեսզի պարզ հասկացվի, թե ում է վիճակվելու ղեկավարել երկիրը հինգ, տասը կամ քսան տարի հետո: Այս կապակցությամբ չի՞ փոխվի, արդյոք, Ամերիկայի պատկերը, եւ կպահպանվե՞ն, արդյոք, Եվրոպայի հետ նրա նախկին կապերը:

* * *

Մինչեւ վերջին ժամանակները տրանսատլանտյան հարաբերությունները կառուցվում էին ընդհանուր պատմության, ավանդույթների ու արժեքների հիման վրա: Մեզ, իհարկե, այսուհետ էլ կմիավորեն շուկան եւ ժողովրդավարությունը, սակայն դրանք ավելի ու ավելի են դառնում ոչ միայն Արեւմուտքի, այլեւ ողջ աշխարհի սեփականությունը: Բայց կարո՞ղ

են, արդյոք, երկարաժամկետ հեռանկարում համընկնել Աստծո, հասարակության մեջ կրոնի դերի, մարդու իրավունքների (ներառյալ արհեստական վիժումներն ու մահապատիժը), ազատության, վերջապես՝ ուժերի հաշվեկշռի մասին մեր պատկերացումները: Եվրոպան արեւմտյան հիմնարկների համար մնալու է որպես «սառցախցիկ», իսկ ԱՄՆ-ը վերջնականապես վերածվելու է համաշխարհային նոր արժեքների ձեւավորման լաբորատորիայի:

Լինելով «տիեզերական երկիր»՝ Միացյալ Նահանգներն իր վրա է վերցնում համաշխարհային խնդիրներ... Եվրոպան ամերիկացիներն իրենց համար խնդիր չեն համարում: Նրանց համար դա վայր է, որտեղ կարելի է անցկացնել արձակուրդը, այլ ոչ թե տարածաշրջան, որն ունի ռազմավարական գեթ ինչ-որ նշանակություն:

Իսկ ո՞ր խնդիրներն են լինելու զուտ եվրոպական: Մենք՝ եվրոպացիներս, ունենք երեք հիմնական մտահոգություն: Առաջինը ներգաղթն է. երեւոյթ՝ հատկապես էական այնպիսի երկրների համար, ինչպիսիք են Իտալիան, Իսպանիան եւ Պորտուգալիան (անցյալի արտագաղթի այս երկրներն այժմ պետք է համակերպվեն ներգաղթի երկիր լինելու հետ): Երկրորդ մտահոգությունը կապված է առաջինի հետ. դա մեր ժողովրդագրական վիճակն է, նախեւառաջ՝ նրա ազդեցությունը կենսաթոշակային ապահովման վրա: Երրորդը, որ մեզ մտահոգում է, սահմանների անորոշությունն է: Մենք չգիտենք, թե որտեղով են անցնում մեր արեւելյան ու հարավային սահմանները: Այսպիսի իրավիճակը մշտապես սպառնալու է տարբեր կարգի միջադեպերով եւ բարդություններով: Սակայն նման վտանգներին համաշխարհային տերությունը ծանոթ չէ: Եթե ԱՄՆ-ը մտահոգված է ողջ աշխարհի ճակատագրով, ապա մեր հետաքրքրությունները կրում են միանգամայն եսասիրական բնույթ: Մենք մեզ չենք համարում համաշխարհային տերություն:

Պակաս կարելուր չէ այն, որ մենք այլեւս չունենք ընդհանուր թշնամի, ինչպիսին ԽՍՀՄ-ն էր: Մենք՝ Արեւմտյան Եվրոպայի բնակիչներս, շատ բանով պարտական ենք Իոսիֆ Ստալինին: Եթե չլիներ խորհրդային սպառնալիքը, Եվրոպան չէր միավորվի եւ 40 տարվա ընթացքում չէր պահպանի սերտ հարաբերություններ ԱՄՆ-ի հետ: Այնպես որ, Եվրոպան իր ծնունդով ավելի շատ պարտական է Ստալինին, քան ժան Մոնեին (*Ժամանակակից եվրոպական ինտեգրացման հիմնադիրը*): Մենք այլեւս չենք ունենալու ընդհանուր թշնամի: Ահաբեկչությունն ընդհանուր թշնամի չէ, այլ ընդհանուր քավության նոխազ. ահաբեկչության հետ կապված վտանգներն ակնհայտորեն բավարար չեն կայուն ու երկարաժամկետ միություն ստեղծելու համար:

* * *

ԱՄՆ-ի ու Եվրոպայի միջեւ ռազմավարական կապերը շարունակ թուլանում են: Ի՞նչ է ՆԱՏՕ-ն. կազմակերպություն, որ հազիվ է գլուխ հանում իր պարտականություններից՝ չունենալով որոշակի առաքելություն, համոզմունք եւ նպատակներ: ՆԱՏՕ-ն այլեւս գոյություն ունի լոկ որպես գործիք, որի միջոցով Միացյալ Նահանգները խանգարում է Եվրոպային ստեղծել սեփական պաշտպանական համակարգ:

Եվրոպայում ԱՄՆ-ի հետ ներկա եւ ապագա հարաբերությունների վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Բրիտանական վերնախավը, հասկանալով, որ Ամերիկյան վերափոխություն է ապրում, չի ցանկանում տվյալ փուլում խզել հատուկ հարաբերությունները նրա հետ: Նա գտնում է, որ քանի դեռ այդ կապը գոյություն ունի, կկարողանա ազդել ամերիկյան քաղաքականության վրա:

Գերմանիայի հետ ամեն ինչ քիչ թե շատ պարզ է. այն ձգտում է դառնալ Շվեյցարիա: Խաղաղասիրական (պացիֆիստական) տրամադրությունները հասարակությունում եւ «ռազմավարական կամքի» բացակայությունը վերածում են նրան շատ պարկեշտ ժողովրդավարական երկրի, որի ազդեցությունը ինչ-որ չափով իր սահմաններից արեւելք է տարածվում եւ որն ԱՄՆ-ի հետ հարաբերություններն այլեւս սեփական քաղաքականության համար առանցքային չի համարում: Գերմանացիները Միացյալ Նահանգներին հավաստիացնում են իրենց հավատարմության մեջ, բայց նրանք անկեղծ չեն:

Ֆրանսիացիներն, ինչպես հայտնի է, հետեւում են դը Գոլի պատգամներին եւ կողմնորոշված են դեպի Երրորդ աշխարհ. նրանք ցանկանում են հիմնել ու գլխավորել չմիավորման նոր շարժումը: Երբ գործերը լավ են գնում, Շիրակը հույս է տածում հանդես գալ Ներուի դերում, իսկ երբ հաջողությունը նրան դավաճանում է՝ Նասերի դերում: Սակայն մեզ հարկավոր է դրա հետ համակերպվել:

Իսպանացիներն իրենց տեսնում են «Իսպանիդադ» (Hispanidad) անվամբ ազգերի նոր միության ղեկավար, որի շնորհիվ կկարողանան առանձնակի հարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի հետ: Երկարաժամկետ հեռանկարում այդ նոր «առանձնակի հարաբերություններն» ամենեւին էլ չեն լինի բրիտանականի պատճենը. դրանք կկառուցվեն իսպանական ոճով: Միայն պատկերացրեք, թե ինչ նշանակություն ունի իսպանացիների համար այն փաստը, որ իրենց մայրենի լեզվով խոսում են 350 մլն մարդ, այդ թվում՝ 50 մլն ԱՄՆ քաղաքացիներ:

Ինչ վերաբերում է նոր Եվրոպացիներին, ապա նրանք երախտապարտ

են Միացյալ Նահանգների «սառը պատերազմում» հաղթելու համար, եւ դա միանգամայն բնական է: Ֆրանսիացիները 1945թ. նույնպես երախտապարտ էին ԱՄՆ-ին Երկրորդ աշխարհամարտում Գերմանիային ջախջախելու համար: Արդյոք հարատե՞լ է լինելու այս բնական զգացումը: Արդյոք չե՞ն հեռանա Միացյալ Նահանգներից լեհերն ու հունգարացիները, եթե երբեւէ Օվալաձեւ աշխատասենյակը զբաղեցնի հնդկական կամ չինական ծագումով ամերիկացի:

Իսկ ահա տնտեսական կապերը Եվրոպայի ու ԱՄՆ-ի միջեւ կմնան հաստատուն: Մեր շուկայական տնտեսությունները գործում են միեւնույն պայմաններում, որոնք տարբերվում են աշխարհի մյուս մասերին բնորոշ պայմաններից: Եվրոպան վերցրել է կապիտալիզմի անգլոսաքսոնյան մոդելը, եւ դա երկար ժամանակով է: Շահերի ընդհանրության ֆոնի վրա մեր միջեւ առեւտրային կոնֆլիկտներն էական չեն հանդիսանում: Ջարգացող երկրների միասնության ամրապնդումը, որ ցայտուն կերպով արտահայտվեց Առեւտրի համաշխարհային կազմակերպության 2003թ. Կանկունի նստաշրջանում, ԱՄՆ-ին ու Եվրոպային ստիպում է մերժենալ չնայած գյուղատնտեսության, պողպատի եւ բանանի արտահանման հարցերում նրանց միջեւ տարածայնություններին: Ինչ վերաբերում է դոլարի ու եվրոյի հարաբերություններին, ապա դրանք չեն վերաճի առճակատման: Բացառված չէ, որ երկու կողմերն էլ արտահանման անվանական արժույթները 10%-ով արժեզրկել սեփական արժույթները, սակայն երկարաժամկետ հեռանկարում յուրաքանչյուրն էլ շահագրգռված կլինի կայուն դրամական համակարգի պահպանմամբ:

Չինաստանի, Ղազախստանի եւ այլ նոր «խաղացողների» հետ աճող մրցակցությունն ավելի է խթանելու ԱՄՆ-ի ու Եվրոպայի միջեւ տնտեսական կապերի ամրապնդումը. մեր շուկաները հավասարապես թիրախ են հանդիսանում նոր «խաղացողների» համար:

Իհարկե, տարածայնությունները կպահպանվեն: Ապագայում Միացյալ Նահանգների տնտեսությունն ավելի արագ կաճի, քան Եվրոպայինը, քանզի Ատլանտիկայի տարբեր կողմերում գործում են երկու տարբեր մոդելներ. Եվրոպայում առավել զարգացած է հովանավորչությունը, իսկ ԱՄՆ-ում՝ մրցակցությունը: Սակայն մնացած աշխարհի առաջ մենք գտնվում ենք միեւնույն դիրքում, միեւնույն ճամբարում:

Այս համատեքստում հնարավոր են ԱՄՆ-ի ու Եվրոպայի միջեւ հարաբերությունների զարգացման չորս տարբեր սցենարներ.

1. Ես այն անվանում եմ «նվազագույն ատլանտիցիզմ» (*ատլանտիցիզմը ԱՄՆ-ի ու Արեւմտյան Եվրոպայի երկրների միջեւ սերտ համագործակցության քաղաքականություն է*): Այն ենթադրում է ամերիկյան նոր վարչակազմի վերադարձը բազմաբեւեռության սկզբունքին: Ընդ որում,

միավորված Եվրոպան առանց որել է բարդությունների կպահպանի ԱՄՆ-ի հետ ամուր կապը, Ամերիկան էլ կմնա այն նույն երկիրը, որին մենք միշտ սիրում էինք: Սա հնարավոր է, թեև, իմ կարծիքով, քիչ հավանական: Եթե այն իրագործվի, ապա իմ պատկերացումը նոր Միացյալ Նահանգների մասին լիովին սխալ դուրս կգա:

2. Շատ կտրուկ խզում: Ամերիկան դառնում է «տիեզերական երկիր», իսկ Եվրոպան հանգիստ ինտեգրվում է: Միաժամանակ, արտաքին աշխարհն սպառնալիք չի ներկայացնում: Այնպես որ, օվկիանոսի տարբեր կողմերի երկու գործընկերներին այլևս ոչինչ չի կապում. չկան ո՛չ ընդհանուր շահեր, ո՛չ ընդհանուր վտանգներ, չկա՛ եւ ահաբեկչությունը: Մենք կպահպանենք զուտ բարեկամական հարաբերություններ՝ ոչ ավելին, բայց ոչ էլ պակաս:

3. Կայսերական տիրապետություն: ԱՄՆ նոր նկարագիրը ամբողջովին ձեւավորված է: Եվրոպան չկարողացավ միավորվել, սակայն մենք ապրում ենք խաղաղ աշխարհում՝ առանց գլոբալ սպառնալիքների: Միացյալ Նահանգների տիրապետությունը դառնում է համապարփակ, ու Եվրոպայի առանձին երկրներ իրենց հույսը կապում են «ուճիվերսալ երկրի» հետ: Բայց մինչ Վաշինգտոնը նրանց վրա կիրավիրի իր բարեհաճությունը, նրանք ստիպված կլինեն երկար ժամանակ մալայզիացիների, ինդոնեզացիների եւ այլոց արանքում, հնարավոր է նաեւ՝ նրանցից հետո մեծ հերթի կանգնել: Եվրոպան կլինի փոքր երկրների տարածաշրջան:

4. Նոր Ամերիկա, միավորված Եվրոպա, տրանսատլանտյան կապերի վերականգնում՝ խոր ճգնաժամի պատճառով: Այդպիսի ճգնաժամ կարող է հրահրել Չինաստանը՝ որոշելով հավակնել համաշխարհային տերության կարգավիճակին (ինչը հղի է ԱՄՆ-ի հետ բախմամբ՝ Թայվանի պատճառով) կամ էլ ահաբեկչական գործողությունը՝ միջուկային զենքի կիրառմամբ: Եթե լինի նման ճգնաժամ, ապա, չնայած նոր Միացյալ Նահանգների ու միավորված Եվրոպայի միջեւ բոլոր հնարավոր տարածայնություններին, նորից ի հայտ կգան ընդհանուր շահեր: «Նոր Ստալինը» տրանսատլանտյան կապերի ամրապնդման խթան կհանդիսանա:

Իրադրությունը, երբ իրականություն կարող է դառնալ ցանկացած սցենար, մեզ՝ Եվրոպացիներին շատ բան է պարտավորեցնում: Առաջին, փորձել հասկանալ Ամերիկային եւ պատրանքներով չհուսադրել մեզ, թե ԱՄՆ-ը այն նույն երկիրն է, ինչպիսին նրան գիտեր ավագ սերունդը: Մենք պետք է պատրաստվենք գոյակցել ուրիշ՝ այնպիսի Ամերիկայի հետ, որը կտեսնեն մեր զավակները: Երկրորդ, մեզ հարկավոր է պահպանել բարեկամական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ՝ չտածելով նրա նկատմամբ ո՛չ ավելորդ սեր, ո՛չ ավելորդ ատելություն: Երրորդ, հաշվի առնելով նոր հանգամանքները՝ մենք պիտի գիտակցենք, որ Եվրոպայի

ինտեգրումը մեզ համար ավելին է, քան սոսկ պարտականությունը:

Իսկ եթե մենք հավատարիմ ենք եվրոպական գաղափարին եւ չենք պատկերացնում մեր ապագան եվրոպական միությունից դուրս, ապա մեզ հարկավոր է հասնել չորս նպատակի. ԵՄ Սահմանադրության ընդունման, եվրոյի գոտու շրջանակներում տնտեսական ինտեգրման խորացման, պաշտպանության ոլորտում համագործակցության աշխուժացման եւ ֆրանկոգերմանական միության ամրապնդման: Այս բոլոր խնդիրներն անհամեմատ հեշտ կլինի լուծել, եթե եվրոպացիներն ըմբռնեն, որ Միացյալ Նահանգներն այլեւս այն երկիրը չէ, որն իրենք գիտեին եւ որը ոմանք կցանկանային նախկինը տեսնել:

(տպագրվում է կրճատումներով)

«Россия в глобальной политике»

2004թ. դեկտեմբեր

ՈՎՔԵՐ ԵՆ ՍԵՋ ԴՐԴՈՒՄ ՆՈՐ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» Պատրիկ Բյուքենեն

Պատրիկ Բյուքենենը եղել է ԱՄՆ նախագահներ Նիքսոնի եւ Ռեյգանի խորհրդականը, 1992 եւ 1996 թվականներին Հանրապետական կուսակցության կողմից առաջադրվել է նախագահի թեկնածու: Բացի այդ, Բյուքենենը «The American Conservative» հանդեսի հիմնադիրն է եւ ներկայումս համազգային հեռուստատեսությունում վարում է իր իսկ ստեղծած մի քանի ծրագրեր:

ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) նախկին տնօրեն Ջեյմս Վուլսին, վերջերս հանդես գալով «Fox News» ծրագրում, պուտինյան Ռուսաստանն անվանեց «Ֆաշիստական»: Ավելի վաղ նա ասել էր հետեւյալը. «Պուտինի օրոք ռուսական կառավարությունը չափազանց մոտ է նրան, որ, ըստ էության, դառնա ֆաշիստական»:

Նախորդ աշնանը Ջրիգնել Բժեզինսկին «The Wall Street Journal»-ի էջերում Պուտինին անվանել էր «մոսկովյան Մուսոլինի» եւ նրա վարչակարգը բնութագրել որպես «չատ կողմերով համանման Մուսոլինիի ֆաշիզմին»:

Քանի որ Վուլսին նախկինում եղել է ԿՀՎ տնօրեն, իսկ Բժեզինսկին՝ ազգային անվտանգության գծով նախագահի խորհրդական, Մոսկվան, ամենայն հավանականությամբ, այս խոսքերը կորակի որպես բռնի գործողությունների կոչ: Նույն կերպ կորակելինք դրանք նաեւ մենք, եթե ռուսական նախկին բարձրաստիճան վարչարարներից որեւէ մեկը Ջորջ Բուշ-կրտսերին հանկարծ սկսեր անվանել ֆաշիստ, իսկ մեր կառավարությունը՝ ֆաշիստական:

Սակայն ոչ միայն այս վիրավորանքները ստիպեցին Պուտինին պահանջել այն հարցի պատասխանը, թե մտադիր չէ, արդյոք, Ամերիկան շրջապատել եւ մեկուսացնել Ռուսաստանը:

Քողարկվելով ժողովրդավարության սուրբ հասկացության տակ՝ մենք միլիոններ ենք ներդնում նախկին խորհրդային հանրապետություններում՝ հանուն նրա, որպեսզի տապալենք Մոսկվային բարեկամ վարչակարգերը եւ նպաստենք այնպիսի կուսակցությունների ու քաղաքական գործիչների ընտրությանը, որոնք կխզեն կապերը Ռուսաստանի հետ, կկողմնորոշվեն դեպի Արեւմուտք եւ կմտնեն ՆԱՏՕ, ուր իշխում է ԱՄՆ-ը:

«The Associated Press»-ի աշխատակից Մաթ Քելիի վկայությամբ, Ամերիկան, որպեսզի ֆինանսավորի նախագահ Լեոնիդ Կուչմայի տա-

պալումը, ընտրություններում վարչապետ Վիկտոր Յանուկովիչի պարտությունը եւ Վիկտոր Յուշչենկոյի նախագահ ընտրվելը, երկու տարվա ընթացքում Ուկրաինայում ներդրել է ավելի քան 65 մլն դոլար: Յուշչենկոյի հաղթանակը վերընտրություններում ողջունվում է որպես Ուկրաինայի պատմության մեծագույն իրադարձություններից մեկը, սակայն այն կասկածելիորեն նման է ամերիկյան «էլեկտորատային ինժեներիայի» արտադրանքին: Ինչպես հայտարարում է Քելին, ԱՄՆ փողերն ուղղվեցին Ուկրաինա, որպեսզի «պատրաստեն խմբեր եւ անհատ մարդկանց, որոնք հանդես են գալիս ռուսական կառավարության կողմից սատարվող թեկնածուի դեմ, որոնք այժմ կոչում են իրենց Նարնջագույն հեղափոխության մասնակիցներ»:

Անգլիացի լրագրող Ջոն Լաֆլենդն ասում է, թե «İ ÷ ð» երիտասարդական խումբը, որը նույնքերին գրավել էր Կիևի կենտրոնական հրապարակը, երբ թվում էր, թե Յուշչենկոյից խլել են հաղթանակը, հիշեցնում է Սերբիայի «İ ÷ ð» եւ Վրաստանի «Կմարա» կազմակերպությունները. կազմակերպություններ, որոնք ստեղծվել ու ֆինանսավորվել են Վաշինգտոնի կողմից:

«The Guardian»-ի աշխատակից Իեն Թրեյնորի խոսքերով՝ ԱՄՆ գործակալությունները քվեատուփերի եւ քաղաքացիական անհնազանդության միջոցով ժողովրդավարության առաջխաղացման գործողությունը հասցրին այնպիսի կատարելության, որ այդ մեթոդները դարձան այլ երկրների ընտրություններում հաղթանակի հասնելու օրինակներ: Թեպետ Բելառուսում այդ գործողությունն անկարող եղավ գահընկեց անել Ալեքսանդր Լուկաշենկոյին, սակայն դրանով հաջողվեց Սերբիայում փոխել Միլոշեվիչին, Վրաստանում՝ մեր վաղեմի բարեկամ Շեւարդնաձեին եւ այժմ էլ Ուկրաինայում՝ Կուչմա - Յանուկովիչին:

Արեւմտամետ ու ՆԱՏՕ-ամետ կուսակցություններին մարդկանցով, դրամով եւ կադրերի պատրաստմամբ օգնելու համար ծառայեցվել են մի շարք կառույցներ, որոնց թվում են՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID), ժողովրդավարության զարգացման ազգային հիմնադրամը (NED) եւ նրա դուստր կազմակերպությունները, Միջազգային հանրապետական ինստիտուտը (IRI) եւ Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (NDI), ինչպես նաեւ «Freedom House» իրավապաշտպան ու Ջորջ Սորոսի բարեգործական կազմակերպությունների զանազան մասնաճյուղերը:

Ո՞վ է Միջազգային հանրապետական ինստիտուտի նախագահը. Ջոն Մակքեյնը: Ո՞վ է ղեկավարում Ազգային ժողովրդավարական ինստիտուտը. ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթը: «Freedom House» կազմակերպությունում ո՞վ է հրամաններ արձակում. ԿՅՎ նախկին տնօրեն Ջեյմս Վուլսին: Արդյոք Սպիտակ տունն այդ խմբերին «կանաչ

լո՞ւյս» է տվել, որպեսզի միջամտեն Ուկրաինայի ընտրություններին եւ կշեռքի նժարը թեքեն Յուլչենկոյի կողմը:

Հուլյերի ինստիտուտի հետազոտող Մայքլ Սաքֆոլը «The Washington Post» թերթում խոստովանում է, որ «ազդեցության ամերիկյան գործակալները միջամտել են Ուկրաինայի ներքին գործերին» եւ ավելացնում. «Մենք այդպես վարվելու բարոյական իրավունք ունենք»: Նա ասում է, որ թեւեւ ժողովրդավարամետ կազմակերպությունները ֆինանսավորվում են ԱՄՆ կառավարության կողմից, սակայն գործում են ինքնուրույն եւ ԱՄՆ Պետդեպարտամենտն ու Սպիտակ տունը «գրեթե ամենչափով չունեն ժողովրդավարության զարգացմանն աջակցող ծրագրերի մշակման կամ իրագործման հետ»:

Բուշ-կրտսերի մամուլի քարտուղար Սքոթ Մաքլելանը դա ժխտում է. «Գոյություն ունի հաշվետվության համակարգ: Մենք աշխատում ենք համոզվել, որ գումարները ծախսվել են այն նպատակների վրա, որոնց համար հատկացվել են»:

Ուրեմն որտե՞ղ է ճշմարտությունը: Իրո՞ք Բուշ-կրտսերը զիջել է ռուսական քաղաքականության վերահսկողությունը «ազատ նկարիչներին», որոնք ատում են Պուտինին ու ցանկանում են մեկուսացնել նրա կառավարությունը, թե՞ Սպիտակ տունը ջանում է իր համար ապահովել հերքման արժանահավատ հնարավորություն՝ միաժամանակ թույլատրելով «ազատ նկարիչներին» կատարելու մի աշխատանք, որը «սառը պատերազմի» տարիներին անում էր ԿՀՎ-ն:

Եթե Պուտինը սաստիկ զայրացած է, կարո՞ղ ենք մենք, արդյոք, դրա համար նրան մեղադրել: Ինչպե՞ս կարծազանքեինք մենք, եթե չինացիները կամ ֆրանսիացիները միջամտեին մեր ընտրություններին, իսկ հետո Եվրամիությունը կամ Պուտինը դատապարտեին 2000թ. Ֆլորիդա նահանգում քվեների վերահաշվարկումը կամ 2004թ. Օհայո նահանգում ընտրությունների արդյունքները որակեին որպես խարդախություն:

Ռուսաստանի բարեկամության նվաճումը «սառը պատերազմում» մեր հաղթանակի գլխավոր դիվիդենդներից էր: Մեզ հարկավոր չէ արտաքին քաղաքականության «ազատ նկարիչներին», հավասարապես նաեւ՝ չվերահսկվող գործակալություններին կամ ոչ կառավարական կազմակերպություններին թույլատրել՝ վտանգի տակ դնելու այդ կենսականորեն կարեւոր հարաբերությունները:

ԱՄՆ Կոնգրեսը պարտավոր է այս հարցով անցկացնել հրապարակային լսումներ: Այն առնվազն պիտի թույլ տա մարդկանց իմանալ, թե ովքեր են մեզ դրդում Ռուսաստանի հետ նոր «սառը պատերազմի» եւ «չորրորդ աշխարհամարտի»:

«Antiwar.com», ԱՄՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ռուբեն Խուրշուդյան ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	1
Դավիթ Հովհաննիսյան ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԴԻՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ	5
Գագիկ Տեր-Հարությունյան ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ	10
Կարեն Վերանյան ՆԵՐԻՇԽԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ...	15
Սարգիս Հարությունյան ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԻՍԼԱՄԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ՇՈՒՐՋ	19
Սեւակ Սարուխանյան ԵԳԻՊՏՈՍԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ	23
Արաքս Փաշայան ԻՍԼԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՇՈՒՐՋ	27
Ալեն Մեմկ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՆ	32
Պատրիկ Բյուրեճեան ՈՎՔԵՐ ԵՆ ՄԵՋ ԴՐԴՈՒՄ ՆՈՐ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ»	38

*Շապիկի վրա պատկերված է
Գազանա լիճը (Զանգեզուր)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: